№ 258 ՈՒՐԲԱԹ, 14 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1914

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ 14 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 258

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

„ՄՇԱԿԻ" այսօրվայ համարի հետ ուղարկվում է Մեր բոլոր բաժանորդներին խմբագրութեան հրատարակած ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄԻ ՔԱՐՏԷԶԸ:

ՄՇԱԿ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ից ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 2 ՌՈՒԲ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնների համար պետք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:
ՊԱՐՏՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

33-րդ „ԱՂԲԻՒՐ" 1915 „ՏԱՐԱԶ" 26-րդ
ՏԱՐԻ Բացված է առաջիկայ 1915 թ. «ԱՂԲԻՒՐ» ՏԱՐԻ
մանկական-մանկավարժական պատկերազարդ ամսագրի և գրական-գեղագիտական-քննադատական-քաղաքագիտական „ՏԱՐԱԶ" հանդէսի, որ համաշխարհային մամուլի մէջ ճանաչված է իբրև հայ ՄԻԱԿ իլլիւստրասիոն պարբերական հրատարակութիւն: „ԱՂԲԻՒՐ"-„ՏԱՐԱԶԻ" տարեկան բաժանորդագինը 10 ր., արտասահման 50 ր. կամ 40 շիլինգ: Բաժանորդները ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆԻ jour fixe-երին կարող են այցելել միշտ, ինչպէս և ՍԱԼՕՆԻ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ ամեն օր առ. ժ. 11—7-ը երեկ.:
Հասցէն՝ Тифлисъ, Редакція «АГБЮР»-«ТАРАЗ». Tiflis. Direction «Agbür»-«Taraz».
Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ
առ. 54. 6—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
սեկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիստենտ Բեռլինի համալսարանի պրոֆ. Պօզների:
նդունում է հիւանդներին միզասեռական, իֆիլիսի և կաշուի հիւանդութիւններով՝ ու. ժ. 10—12, երեկ. ժ. 4—6: Սոլոլակ, արիչեվսկայա փող. սեփ. տուն, № 1, ընհաշէջների բնակատեղիի դիմացը, տելեֆոն 10—58.
(չ. ու. կ.) առ. 875. 50—27

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԵՕՆՋԵԱՆ
րգանալով վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի:
Ընդունելութիւնը ամենայն օր.
Առաւ. 9—2 ժ.
Երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.
երմոնտովսկայա փողոց № 1. մուտքը Նորքափողոցից:
առ. (ա. օ.) 804. 0—60

ՍՏՈՐ ՊՐՈՎՈԿԱՑԻԱՆԵՐ

Հաճութեամբ թարգմանում ենք այ- որ «Кавк. Слово» թերթի մէջ տպված իբիրսկիի գեղեցիկ յօդուածը այն սրամիտ և քսու բանսարկութիւնների մասին, որոնք տարածվում են հասարակութեան մէջ պրովոկատորական պատակով և որոնք նպատակ ունեն րգել, թշնամական զգացումներ ար- արծել ռուս ազգի մէջ դէպի հայ ողովուրդը:

Շատ ճիշդ է նկատում յօդուածա- իրը, որ կովկասեան մամուլի նուիրական պարտականութիւնն է եռանդուն ընդդիմադրութիւն ցոյց տալ մի ամբողջ ազգի դէմ տարածվող զրպարտութեան, խեղդելու համար իր սաղ- ի մէջ չարամիտ և նենգամիտ դիտաորութիւնները:

Եւ, արդարև, միթէ չարամիտ և ենգամիտ պրովոկացիա չէ տարածելը ի ազգի զինւորների մասին լուրեր, թէ նա վախկոտ է…, թէ նա ակամայ է պատերազմի գնում, թէ նա աշխատում է խույս տալ կռւից, նպաստում է թշնամուն, երբ այդ ազգը մինչև այժմ պատմութեան մէջ չը տեսնված և չը լսված ոգևորութեամբ իր զաւակներին ուղարկում է կռւելու իր դարաւոր թշնամու դէմ: Չէ՞ որ նոյն իսկ պատանիները, օրիորդները, որոնք պէտք է նստեն տանը, նրանք եւ փախչում են ծնողական տնից և գնում են պատերազմի դաշտը:

Անշուշտ, կարող են լինել մի քանի թուլամորթ, տկար հայ զինւորներ, որոնք ցոյց կը տան վախկոտութիւն, չեն կամենայ կատարել իրանց պարտականութիւնը. բայց չէ՞ որ դա կարող է պատահել և պատահում է բոլոր ազգերի զինւորների մէջ—և՛ հայի, և՛ ռուսի, և՛ վրացու, և՛ թուրքի: Եւ բնաւ մի երկու վախկոտները չեն կարող ստուեր ձգել մի ամբողջ ժողովրդի վրա, որ այսօր, կարելի է ասել, ազգովին ոտքի է կանգնել Թիւրքիայի դէմ և ամեն կերպ աջակցում է Ռուսաստանին:

Սխալ է և այն կարծիքը, թէ հայերը գնում են կռւելու, բայց փոխարէնը կոմպենսացիա, փոխարինութիւն են ուզում: Դրանով կամենում են ակնարկել, թէ հայերը անկեղծօրէն չեն կռւում Ռուսաստանի համար, այլ կռւում են, որովհետև սպասելիք ունեն:

Բայց ո՞ր զօրք, ո՞ր ազգ, ո՞ր ժողովուրդ, երբ գնում է պատերազմելու, որոշ ակնկալութիւններ չունի: Ռուսները, ֆրանսիացիները, անգլիացիները, բէլգիացիները, սերբերը պատերազմում են այն ակնկալութեամբ, որ տապալեն գերմանական միլիտարիզմը, վերականգնեն ոտնակոխ եղած մարդկային նուիրական իրաւունքները, թոյլ չը տան ճնշել, հարստահարել մանր ազգութիւնները:

Ինչ վերաբերում է հայերին, նրանք, արդարև, կրկնակի ակնկալութիւններ ունեն, ուստի և բնական է, որ կրկնակի են ոգևորված: Նախ՝ նրանք կռւում են իբրև ռուսական քաղաքացիներ և Մեծ Ռուսաստանի զաւակներ. երկրորդ՝ նրանք կռւում են և այն մեծ ակնկալութեամբ, որ այս անգամ, շնորհիւ ռուսական զօրքի, վերջապէս, թիւրքահայերը կը ստանան ազատութիւն: Եւ ի՞նչ անբնական ու անհասկանալի բան կայ, եթէ հայերը կրկնակի եռանդ և ոգևորութիւն են ցոյց տալիս այս գործում:

Նա, ով լաւ ծանօթ է հայկական հարցի պատմութեան հետ, նա գիտէ, թէ ինչու այժմ հայերը ոգևորվել են աւելի, քան ուրիշները:

Հայերը ամբողջ 36 տարի Բերլինի կոնգրէսից յետոյ ամեն տեսակ փորձութիւններ կատարեցին, ամեն տեսակ միջոցների դիմեցին, յաճախ սաստիկ յուսահատական, դիմեցին նոյնիսկ յեղափոխական միջոցների, որպէսզի կարողանան թեթևացնել իրանց թիւրքահայ եղբայրների անտանելի և դժոխային վիճակը: Նրանց բոլոր ջանքերի, երկունքի արդիւնքն այն եղաւ, որ հարիւր հազարաւոր հայեր իբրև ոչխարներ մորթոտվեցին: Եւրոպան խուլ մնաց հայերի աղիողորմ աղաղակների և կոչերի առաջ: Եւ հայ ժողովուրդը համոզվեց, որ հայկական հարցը կը լուծվի միայն այն ժամանակ, երբ քաղաքական հանգամանքները նպաստաւոր կերպով դասաւորվեն: Եւ ահա այսօր է այդ նպաստաւոր օրը, երբ քաղաքական պայմաններն այնպէս են դասաւորվել, որ այսօր և Անգլիան, և Ֆրանսիան, և Ռուսաստանը համաձայն են վերջ տալ թիւրքական տիրապետութեան: Եւ ի՞նչպէս հայերը չօգտվեն այդպիսի նպաստաւոր հանգամանքից՝ խորտակելու այն թշնամուն, որ հայութեան դահիճն է հանդիսացել:

Կարելի էր մեղադրել ոգևորված ռուսահայերին ինքնասիրութեան և ոչ անկեղծութեան մէջ այն ժամանակ, եթէ նրանք իրանց համար եւս որևէ պահանջ դնէին հրապարակի վրա: Բայց այդպիսի պահանջ բնաւ չը կայ. եթէ մենք խօսում ենք ինքնավարութեան, աւտօնօմիայի, ռէֆօրմների մասին, դա բացառապէս թիւրքահայերի համար է: Իսկ ռուսահայերը, իբրև Ռուսաստանի քաղաքացիներ և հպատակներ, կը ստանան այն ամենը, ինչ որ կը ստանան և կայսրութեան միւս հպատակները:

Հ. Առաքելեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

ԱՆԳԼՕ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

12 նոյեմբերի

ԼՈՆԴՈՆ.—Պարսից ծոցի բրիտանական զօրքերի հրամանատարը տեղեկացնում է, որ բրիտանական զօրքերը նոյեմբերի 10-ին անցան Բասրայի փողոցներով քայլերթով դէպի կենտրոնական հրապարակը, ուր հաւաքվել էին տեղացի երևելիները: Ծածանվեց բրիտանական դրօշակ, պարպվեցին թնդանօթներ: Զօրքերը երեք անգամ ի պատիւ թագաւոր կայսրի «ուռա» աղաղակեցին: Յետոյ կարդացվեց ազգաբնակութեանը ուղղված կոչը, որն ընդունվեց ցնծագին բացագանչութիւններով ի պատիւ թագաւորի:

Բասրայում գտնվող թիւրքաց զօրքերի մնացորդները փախան, թողնելով թնդանօթներ ու զէնք: Զօբէյրը, որի մէջ դեռ պաշտպանվում էին թիւրքերը, անձնատուր եղաւ: Բասրայում բոլոր եւրոպացիք առողջ են ու անվնաս: Տեղեկութիւններ են ստացվել, որ անվնաս են նաև բաղդադաբնակ եւրոպացիք:

ԿԱՀԻՐԷ.—Բրիտանական զօրքի գլխաւոր շտաբը յայտնում է, որ 40 բրիտանացի զինւոր ջարդեց 300 հոգուց բաղկացած թիւրքաց մի զօրախմբի Բիր-էլ-Նուսրի և Գատիայի միջև: Եգիպտական զօրքերը կորցրին 12 զինւոր սպանված և 3 վիրաւորված:

ՍՕՖԻԱ.—Թիւրքաց գլխաւոր բանակի պաշտօնական հաղորդագրութիւնը. «Բասրայի մօտ տեղի ունեցած կռւից յետոյ, որի ժամանակ անգլիացիք խոշոր կորուստներ ունեցան, թշնամին, ստանալով օգնութիւն, իր ռազմանաւերի պաշտպանութեամբ դանդաղօրէն առաջացաւ գետի ափի ուղղութեամբ: Մեր զօրքերը սպասում են թշնամուն նոր դիրքերում»:

«Նիւնուֆիւր» շոգենաւը խորտակվել է Կիլիի մօտ:

«Միւս ռազմաբեմերից տեղեկութիւններ չը կան»:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

12 նոյեմբերի

ԿԱՀԻՐԷ.—Եգիպտոս եկաւ Ջէդդայի ռուսաց հիւպատոս Գրանատբէմը:

ԼՈՆԴՈՆ.—Բասրի բրիտանական վաճառականները գտնում են, որ նոյեմբերի 4-ի կռւից յետոյ այնտեղ տարված թիւրք վիրաւորների թիւը հասնում է 2000-ի: Նոբերս զէնքի կանչված արաբ զօրքերը ձգել են զէնքերը և հագել են քաղաքացու զգեստ: Նրանք դժգոհ են թիւրքերի վերաբերմունքից:

ՆԻՒ-ԵՈՐԿ.—Թիւրքաց կառավարութիւնը տեղեկացրեց չէզոք պետութիւնների ներկայացուցիչներին, որ արգելվում է փոխանակել ծածկագիր հեռագիրներ: Միացեալ Պետութիւնները բողոքեցին դրա դէմ:

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Կ. Պոլսից հաղորդում են, որ թիւրքաց մամուլը խստագոյնս դատապարտում է բուլղար օպպօզիցիայի ազգային ժողովում արտասանած ճառերի և այն յայտարարութեան համար, թէ բուլգարների ձգտումների իրագործման գրաւականը Մակեդոնիայում կայանում է եռեակ համաձայնութեան պետութիւններին աջակցելու մէջ: «Իկդամ» լրագիրը գրում է. «Բուլգար հռետորների յայտարարութիւնները Կ. Պոլսում թողնում են միևնոյն տպաւորութիւնը, ինչպէս և Սօֆիայում: Մակեդոնիան հո նուաճելու համար Բուլգարիան բնաւ կարիք չունի եռեակ համաձայնութեան աջակցութեան կամ նրա միջամտութեան, որովհետև բուլգար կառավարութիւնը արդէն ձեռք է բերել այդ աջակցութիւնը յանձին դէպի Բուլգարիան բարեացակամօրէն տրամադրված մեծ պետութիւնների»: «Թանինը», ընդունելով Բուլգարիայի իրաւունքները Մակեդոնիայի նկատմամբ, ասում է. «Հարկ չը կայ, որ ներկայ դէպքում մենք ճնշում գործ դնենք մեր հարևանների վրա. մենք կարող ենք լաւ վստահեցնել նրանց, որ, ընթանալով այդ ուղիով, Բուլգարիան կարող է յոյս դնել Թիւրքիայի աջակցութեան վրա»:

Թիւրքաց կառավարութիւնը, որի միջոցները վերջնականապէս սպառվել են, հարկադրում է օտարազգի դրամատներին, որոնց դրամարկղներում պահվում են մասնաւոր անձանց կողմից պահ տրված գումարները, գլխաւորապէս եռեակ համաձայնութեան պետութիւնների հպատակներից, յանձնել այդ արկղների բանալիները այն պատրուակով, թէ նրանցում պահվող դրամները պէտք է տրվեն թիւրքաց ֆինանսների մինիստրութեան:

Երուսաղէմում Օմարի մեծ մզկիթում աղօթք է կատարվել աւստրիական և գերմանական զօրքերին յաղթութիւն տալու մասին:

ՍՕՖԻԱ.—«Կօր. Բիւրօյին» հաղորդում են Կ. Պոլսից, որ ներքին գործերի մինիստր Թալէաթ-բէյը երեք օր առաջ ընդունեց «Ուկրայնեան ռուսական տիրապետութիւնից ազատող միութեան» ներկայացուցիչ Մէլինևսկիին: «Երբ Ռուսաստանը կը պարտվի, թիւրքաց կառավարութիւնը կաջակցէ ուկրայն ժողովրդին անկախ պետութիւն կազմելու գործում»—ասել է մինիստրը:

—

(Լրագիրներից)

◆ Մայրաքաղաքի թերթերին հեռագրում են, որ անգլօ-ֆրանսիական նաւատորմի ռմբակոծութիւնից Դարդանէլում քանդվել են 12 բերդ: Անգլիական ծովակալը ուլտիմատում ներկայացրեց՝ յանձնել անյապաղ Դարդանէլը, հակառակ դէպքում ռմբակոծութիւնը կը վերսկսվի և բերդերը կանդրվեն այժմ:

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ Աբդիւլ-Համիդի որդի Բիւրհան-էդդինը յանձնվել է զինւորական դատարանին, մեղադրվելով երիտասարդ-թիւրքերի կողմից սուլթանի կեանքի դէմ մահափորձ պատրաստելու մէջ:

◆ Կ. Պոլսում կալանաւորվել են լրտեսութեան կասկածով գեներալ շտաբի գնդապետներ Օմար-բէյը և Լիւթֆի-բէյը:

◆ Իտալական տեղեկութիւնների համաձայն, «Գեբէնի» վնասուածքները կարելի է նորոգել երկու ամսվայ ընթացքում:

◆ Աթէնքից հեռագրում են, որ գերմանական դեսպանը յայտնեց Վէնիզէլոսին, որ Գերմանիան պատրաստ է յանձնել Յունաստանին «Գեօրգի» դրէդնօուտը՝ պայմանով, եթէ տրվի երաշխաւորութիւն, որ «Գեօրգին» չի ուղղվի Թիւրքիայի դէմ: Վէնիզէլոսը հրաժարվեց տալ երաշխաւորութիւն:

◆ Անգլիացիք մեծ ջարդ են տուել թիւրքերին Եգիպտոսում:

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ Մուխթար-խանէի բերդում բանտարկեալներն ապստամբվեցին. զօրքերը համազարկ պարպեցին, սպանեցին 14 հոգու և 35 հոգի էլ վիրաւորեցին: Բանտարկեալների թւում են եղել եղբարք Յակոբեաններ և մի ռուսահպատակ բժիշկ:

◆ Վարշավայից մեկնել են հայ և վրացի ուսանողներ, որոնք կամաւոր զինւոր են մտնելու ռուսաց զօրքի մէջ:

◆ Թէհրանի թիւրքաց դեսպան Ասիմ-բէյը խոստացել է 80,000 լիրա Սիփէհդարին, եթէ գլուխ բերէ Պարսկաստանի հանդէս գալը ընդդէմ Ռուսաստանի և Անգլիայի:

ՀՐԱՄԱՆ ՑԱՆՈՒՑ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԶՕՐՔԻ

№ 106. Մեր զէնքի ամբողջ ոյժը ուղղել բացառապէս զինված թշնամու դէմ: Խաղաղ ազգաբնակութիւնը, ինչ ազգութեան էլ որ նա պատկանի, պէտք է հաւասարապէս օժտվի մեր հովանաւորութիւնից, չանելով այդ տեսակէտից որևէ բացառութիւն:

Ոչ մի տարբերութիւն չը դնել դաւանութիւնների վերաբերութեամբ: Մահմէդական ազգաբնակութիւնը պէտք է վայելէ միևնոյն դրութիւնը, ինչպէս քրիստոնեայ ազգաբնակութիւնը:

Կողոպուտներ, սպանութիւններ, աւազակութիւններ, նաև օտարի սեփականութեան իրաւունքների խախտումն մեր նուաճած վայրերում բնաւ թոյլ չը տալ: Այդ յանցանքներում բռնված մեղապարտներին, առանց ազգի խտրութեան, պէտք է յանձնել զինւորական դատարանի:

Դաշտային շտաբի մասնակցութեամբ կամաւորներից կազմված խմբերը համարել կազմից դուրս (нештатными) անկանոն զօրամասեր և ամբողջովին ենթարկել այն զօրամասերի պետերին, որոնց մէջ գտնվում են այդ կամաւորների խմբերը: Նրանց յարաբերութիւնները տեղական ազգաբնակութեան հետ պէտք է կատարվեն միևնոյն կարգով, ինչպէս սահմանված է կանոնաւոր զօրքերի համար:

Զօրապետները երբեք չը պէտք է միջամտեն որևէ քաղաքացիական գործերի և մեր նուաճած վայրերի ժողովուրդների փոխադարձ յարաբերութիւններին: Նուաճված վայրերի քաղաքացիական վարչութեան համար նշանակված են առանձին կառավարիչներ:

Ոչ մի տուրք կամ հարկ տեղական ազգաբնակութիւնից արգելվում է վերցնել. ինչ որ գնվում է, պէտք է հատուցվի դրամով: Գրաւելուն պէտք է դիմել ծայրայեղ դէպքում, այն էլ կանխիկ վճարով, փոխադարձ համաձայնութեամբ:

Կովկասեան զօրքի ընդհանուր հրամանատար, գեներալ-ադիւտանտ՝
կոմս Վօրոնցով-Դաշկով

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

◆ Սուխումից մեզ գրում են, որ այդտեղից 300 հայ կամաւորներ Արշակի, Արթինի, Ղազարի և Սարգսի խմբապետութեամբ գնացին Ատրպատական՝ միանալու հայ կամաւորներին: 100 հոգի եւս պատրաստվում են գնալու:

◆ Ալէքսանդրօպոլից մեզ հաղորդում են. «Այստեղ կազմվեց տեղական մի մարմին, այժմէական խնդիրներին նպաստելու համար, որի մէջ մտնում են անխտիր կերպով բոլոր դասակարգերի և կուսակցութիւնների ներկայացուցիչները»:

◆ Սեբաստիայից մեզ գրում են, որ ձերբակալված բազմաթիւ հնչակեանների մէջ է նաև պարսկահայերին ծանօթ գործիչ Մուրադը (Սեբաստացի):

◆ Սարիղամիշից հեռագրում են, որ հայ կամաւորների մի նոր խումբ յայտնի Քեռու առաջնորդութեամբ, ի պատիւ Ռուսաստանի արած ցոյցից յետոյ, մեծ ոգևորութեամբ անցաւ սահմանը ազգաբնակութեան ցնծագին հրաժեշտով: Իշխանութիւնները չափազանց գոհ են կամաւորների գնդերի տեսքից:

◆ Հեռագրում են, որ Թիւրքիայում փակվել են բոլոր հայ թերթերը, բացի մէկից:

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄՈՒՄ

Թիւրքաց զօրքերի թիւը

Պատերազմների ժամանակ զօրքի թիւը առաջին նշանակութիւն ունի. երկրորդ գործօնը զօրքի մատակարարական կարողութիւնն է, երրորդը նախաձեռնութեան ոգին, որ կախված է զօրքի ղեկավարների հմտութիւնից ու պատերազմական գործողութեան ընդհանուր ու մասնակի պլանից:

Թիւրքերի դէմ վարած ներկայ պատերազմում՝ առաջին երկուսը—թիւն ու մատակարարութիւնը—գտնվում է թիւրք կառավարութեան ձեռքում, երկրորդը՝ նախաձեռնութեան ոգին և պատերազմական գործողութիւնների ղեկավարութիւնը փաստօրէն անցել է գերմանական ինստրուկտորներին ի դէմս ֆօն-Սանդէրս փաշայի:

Քննենք մեր հակառակորդին այդ երեք կողմերից:

Թիւրքիան, ներկայ պատերազմում, Ռուսաստանի դէմ է հանել իր զինւորական ոյժի բոլոր տեսակները՝ նիզամներին, I և II կարգի մուսթահֆիզը (ополченецъ)՝ սկսած 18 տարեկանից մինչև 45 տարեկան հասակ ունեցողները, որոնք գտնվում են ոչ միայն Անատոլիայում, այլ և պետութեան միւս մասերում: Այնպէս որ այժմ Էրզրումի զօրաբանակի կենտրոնատեղին են ժողոված 4-րդ, 9-րդ, 11-րդ կորպուսները իրանց բոլոր զօրամասերով:

Թիւրքաց կորպուսը սովորաբար բաղկացած պէտք է լինի 45—50 հազար հոգուց, սակայն երբէք կորպուսը այդ թւին չէ հասել, այլ միշտ էլ նրա շարքերից պակասել է ընդհանուր թւի 20°/₀-ը՝ այնպէս որ այժմ, չը հաշւած համիդիական հեծելազօրքը և քիւրդական ու չերքեզական կամաւորները, Թիւրքիան Ռուսաստանի դէմ հանել է 120-ից մինչև 130 հազար կանոնաւոր զօրք, որից միայն նիզամներն ու ռեդիֆների առաջին կարգն է, որ կարող են համարվել իսկական կռուող ոյժեր այս բառիս բուն իմաստով. այն ինչ երկրորդ կարգի ռեդիֆները և մանաւանդ մուստահֆիզը համարվելու են երկրորդ և երրորդ կարգի զինուորներ և պէտք են գալու բանակի զինուորական օժանդակ ծառայութիւնների համար։ Եւ այսպէս՝ ներկայումս մենք մեր դէմ ունենք առաւելն 120,000 լաւ պատրաստված զինուորներ և 25—30,000 էլ սուվարիներ (դրագուն) և համիդիական զօրքեր։

Թիւրքական ալայը (գունդ) բաղկացած է երեք թաբուրից (բատալիոն), թաբուրում պատերազմական ժամանակ լինելու է 800-ից մինչև 900 հոգի, սակայն միշտ էլ թաբուրում եղել է դրա երեք քառորդը կամ 600-ից մինչև 650 հոգի։

Գալով կանոնաւոր հեծելազօրքին, սրա ալայը ունի չորս բէլիւք (էսկադրոն) իւրաքանչիւր 60 հոգուց կամ նոյնքան սրեր։ Ընդհանրապէս նկատելու է, որ թիւրքական հեծելազօրքի մէջ լաւագոյն մասը կազմում են նրա սուվարիները (դրագուն), որոնք ունեն շատ լաւ ձիեր և զինված են ամենաօրինաւոր կերպով։

Ինչ վերաբերում է թիւրքաց թնդանօթային ոյժերին, սրանք բոլոր պատերազմներում ցոյց են տուել պատկառելի յատկութիւններ. նախ թնդանօթները եղել են կամ գերմական Կրուպպի գործարանի կամ ֆրանսիական և անգլիական. մանաւանդ գերազանց են եղել թիւրքական ծանր-պաշարողական թնդանօթները. թնդանօթաձիգները աչքի են ընկել իրանց ճիշդ նշանով. եթէ դրան աւելացնենք, որ վերջին հինգ վեց տարում պատերազմական այդ մասը գտնվել է Գերմանիայի զինուորական հրահանգիչների ղեկավարութեան տակ և կրկնակի ուժեղացված է որպէս պաշարողական ծանր թնդանօթներով, նոյնպէս և աւելի շարժուն-դաշտային թնդանօթներով, այն ժամանակ պարզ կը լինի, որ մենք գործ ունենք ոչ արհամարհելի հակառակորդի հետ, այլ մի պետութեան, որը իր գոյութեան երեք քառորդը անցրել է բացառապէս պատերազմների մէջ, և եթէ նա երկրի միւս պահանջների վրա չէ դարձրել ամենաննշան ուշադրութիւն, սակայն իր ռազմական ոյժի կատարելագործումը շինել է իր գոյութեան հիմքը։

Եւ այսպէս մի յայտարարի տակ բերելով թիւրքական պատերազմական այն ոյժերի թիւը, որ ներկայումս գործում է մեր դէմ, համաձայն մինչև օրս եղած գերմանական և օտար աղբիւրների, գալու ենք այն եզրակացութեանը, որ մենք ունենք մեր դէմ թիւրքական մօտ 180—190,000 զօրք—բոլոր երեք տեսակ զէնքերով—չը հաշւած ի հարկէ ինժեներական և սապերների մասերը, որոնք դրված են թիւրք բանակում անբաւարար։

Սալ-Ման

ՊԱՏԵՐԱԶՄՆ ՈՒ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ

I

Քանի մը օր առաջ «Մշակի» մէջ կարդացի, անսահման գոհունակութեամբ, պ. Վերմիշեանի հեծարժէք յօդուածին թարգմանութիւնը։

Եթէ բովանդակ հայ ազգը ներկայ պատմական արտասովոր վայրկեանին մէջ իր բռնելիք դիրքի մասին ունենայ այն գիտակից ու հեռատես զգացումը, որով տոգորուած է այդ յօդուածը, անտարակուսելի է որ իր պատիւն ու վարկը պիտի բարձրանայ աշխարհիս մէջ և իր դատն իսկ ատկից մեծապէս պիտի նպաստաւորուի։

Աւելի կարևոր, աւելի էական հարց, քան այն զոր պ. Վերմիշեան մէջտեղ կը դնէ՝ այնքան յստակ կերպով, գոյութիւն չունի այս պահուս հայ ազգին համար։

Ես ինքս, պատերազմին սկսելէն քիչ յետոյ, օգոստոս 10/23-ին, «Ազատարար պատերազմը» վերնագրով յօդուածի մը մէջ, որ ամիս մը առաջ Նիւ-Եօրքի «Կոչնակ» շաբաթաթերթին մէջ լոյս տեսաւ, հետևեալը կը գրէի.

«Մարդկային պատմութեան ամենէն մեծ օրերուն մէջ ենք։ Ամբողջ Եւրոպա բռնկած է հսկայական պատերազմով մը, որուն նմանը երբէք չէր տեսնուած… Ատեն է գործելու, ամենուն համար։ Եւ ամենուն հետ, մեզի՝ հայոցս ալ համար։ Մենք անշարժ հանդիսատեսներ չենք կարող մնալ այսպիսի հսկայ յեղաշրջումի մը հանդէպ։ Ինչքան ալ փոքր ըլլանք ու տկար, դեր մը պէտք է բռնենք, բան մը պէտք է ընենք, մեր պարտքը մեր կրցած չափով պէտք է կատարենք մենք մեր ցեղին հանդէպ, ու այս իրաւունքի ու ազատութեան համար մղուած վսեմ պայքարին հանդէպ։

«Պատկերը, զոր այս պայքարը կը ներկայացնէ, հակառակ իր մռայլ ահաւորութեան, շատ պարզ է, և անոր նշանակութիւնը՝ շատ յստակ. մէկ կողմը կեցած է բիրտ ոյժի, բռնութեան պաշտպանը, Ալզաս-Լօրէնը խեղդող, Շլէզվիգ-Հոլշթայնը ճզմող, Լեհաստանն արիւնաքամ ընող, իտալական ամբողջ նահանգ մը իր լուծին տակ տառապեցնող, Սերբիան ու Մոնթենեգրօն ջնջահեղձ ընել ձգտող, միլիոնաւոր չեխեր և այլ սլաւ ցեղեր ու ռումէն ամբողջ ժողովուրդ մը իր անուրին մէջ սեղմող գերման զանգուածը, իր հետ ունենալով իբր միակ բարեկամ ու դաշնակից՝ ջարդող, այրող, քանդող Թիւրքը, միւս կողմը՝ ասպետական Ֆրանսան, որուն անունն իսկ ազատութեան, իրաւունքի, արդարութեան համանիշ է, իր հետ ունենալով ազնուական, ազատասէր, խրոխտ Անգլիան, Թիւրքին լուծէն այնքան ժողովուրդներ ազատող, Արևելքի քրիստոնեաներուն իր հզօր պաշտպանութիւնը շնորհող Ռուսիան (որ, ազգայնութեանց կեանքի իրաւունքը ճանչնալու ձգտումին վերջնականապէս այլ ևս յարած, պատերազմին սկիզբէն իսկ՝ անդամատուած Լեհաստանը միացնելու, իբր ազգ վերակենդանացնելու ազնիւ որոշումը տուաւ), և ասոնց շուրջ՝ բոլոր ազգերը, որոնց համար բռնութիւնը ատելի է, սքանչելի Բելժիքան, դիւցազնական Սերբիան, արի Ջապոնը,… վերջապէս ամբողջ «քաղաքակիրթ» մարդկութիւնը։ Վարանիլ իսկ կարելի չէ։ Դատը, որուն համար կը մարտնչին Ֆրանսայի և իր դաշնակիցներուն ազնիւ զաւակները, մեր դատն իսկ է, բիրտ ոյժի տակ ճզմուած ժողովուրդներուն դատն է, արդարութեան, իրաւունքի, ազատութեան դատն է, որուն համար մեր ցեղը դարերէ ի վեր արիւն է թափեր։ Գերման բռնապետութիւնը, ինչքան ալ ահեղազօր, պիտի ջախջախուի. անհնար է տարակուսիլ այդ մասին։ Տաժանելի, երկար պիտի ըլլայ պայքարը, ահաւոր դիակոյտ մը պիտի բրգանայ երկրիս երեսը, բայց պիտի խորտակուի վիշապը։ Որպէսզի արժանի ըլլանք վաղուան նոր, ազատագրուած, շղթայազերծուած աշխարհին մէջ մեր ազատութեան բաժինը ունենալու, պէտք է որ մենք հայերս ալ մասնակցինք այս տիեզերական պայքարին, այս նուիրական, լծակոտոր, փրկարար պատերազմին։ Քիչ բան կրնանք ընել, բայց այդ քիչն ընենք մեր բոլոր ոյժով, մեր բոլոր սրտով»։

Յօդուածին վերջին մասին մէջ՝ տեղեկութիւն կուտայի այն արարքներուն վրայ, զոր Պարիզի գաղութը արդէն իսկ կատարած էր կամ որոշած էր կատարել «հայոց սրտակցութիւնը ցոյց տալու համար ազատարար պատերազմին ղեկավար երեք մեծ ազգերուն», ու փափաք կը յայտնէի տեսնել, որ հայ ազգին բոլոր հատուածները, մանաւորապէս արտասահմանի գաղութները, ապացուցանէին, միահաղոյն և ուժեղ թափով մը, թէ «մեր փոքրիկ հայ ժողովուրդն ալ կը զգայ մեծութիւնը այս րոպէին, ունի հոգի մը այդ մեծութեան համապատասխան և գիտէ զայն ցոյց տալ»։

Այդ յօդուածը գրելէս յետոյ, ես պահ մը խորհեցայ նմանօրինակ կոչ մը յատուկ յօդուածով մը «Մշակի» մէջ ուղղել ռուսահայ հասարակութեան ևս. բայց ետ կեցայ այդ մտածումէս, վստահ ըլլալով որ ռուսահայ հասարակութիւնը, որ մեր ազգին ամենէն հզօր և հասուն մասն է, ինքնին անշուշտ պիտի զգար այսպիսի արտակարգ րոպէի նշանակութիւնը և ըստ այնմ իր պարտքը պիտի կատարէր իր բոլոր ոյժով։ Պատերազմին սկսելէն անմիջապէս յետոյ, Թիֆլիսի հայոց եկեղեցւոյն մէջ ռուսական զէնքի յաջողութեան համար կատարուած հանդիսաւոր պատարագը և Փոխարքային պալատին առջևէն տողանցող հայկական հսկայ թափօրը, Պետրոգրադի մեր գաղութին ռուս վիրաւորներու համար հայկական հիւանդանոց մը հիմնելը արդէն իսկ ատոր ակներև ու բերկրառիթ ապացոյցներն էին։ Պ. Վերմիշեանի գեղեցիկ յօդուածը և «Մշակի» հաղորդած այն լուրը, թէ Թիֆլիսի հայոց մէջ մտադրութիւն կայ ի մօտոյ Էջմիածնայ մէջ Ամենայն Հայոց Հայրապետին նախագահութեամբ ռուս-հայկական մեծ համաժողով մը գումարել՝ ծրագիր մը յօրինելու և հայ ազգի բռնելիք դիրքն ու կատարելիք գործը հաւաքական լուրջ խորհրդակցութեամբ մը և գերագոյն հանդիսաւորութեամբ վճռելու համար, աւելի ևս կը հաստատեն մեծ յոյսերը, զոր դրած էի ռուսահայ հասարակութեան այս պատմական արտակարգ րոպէին յանուն հայ ազգութեան կատարելիք մեծ դերին վրայ։

Յայտնի է, որ հայ ժողովրդի այլ և այլ հատուածներէն թիւրքահայ հատուածը՝ թիւրք կառավարութեան և ժողովրդին բռնած գերմանամոլ, յիմարական, օսմանեան շահերուն իսկ մեծապէս վնասակար ընթացքին և ցոյց տուած հակազատական ու հակաքրիստոնէական ձգտումներուն պատճառաւ՝ ստիպուած է զգոյշ մնալ։ Պարսկահայը, կարող է աւելի ազատօրէն յայտնել իր զգացումները և որոշ դիրք բռնել և արդէն բռնած ալ է. հինգ-վեց շաբաթ առաջ՝ մեծ հաճոյքով կը կարդայի ֆրանսական լրագիրներուն մէջ հեռագիր մը, որ կըսէր թէ Թեհրանի՝ ինչպէս ամբողջ Պարսկաստանի մէջ՝ հայերը բացէ ի բաց կը յայտնէին իրենց խանդավառ համակրութիւնը Ֆրանսայի և դաշնակիցներուն համար։ Ամենէն աւելի գործելու կարողութիւն և պարտք ունեցողները՝ արտասահմանի հայ գաղութներն են, և մանաւանդ ռուսահայ հասարակութիւնը, որ ամենէն կարևոր ու հզօր դերն ունի կատարելու։

Պ. Վերմիշեան հարցը շատ լաւ դրած է ռուսահայ հասարակութեան առջև։ Զի բաւական չէ,—կըսէ,—որ ռուսահայ անհատներ կամ նոյն իսկ խումբեր, իրենց պարտականութիւնը՝ իբր ռուս քաղաքացի՝ կատարած ըլլան. ռուսահայ հասարակութիւնը, որ ռուսական պետութեան մէկ անբաժանելի մասն է, բայց որ իբր ցեղային ու կուլտուրական ինքնագիտակ տարր իր առանձնայատուկ նկարագիրն ու կազմն ունի, պէտք է որ հաւաքօրէն՝ իբր հայ ազգ՝ ջանք մը ընէ, գործ մը կատարէ, այս վիթխարի պատերազմի մէջ ռուսական մեծ հայրենիքին իր կրցած չափով օգնելու համար։

Պ. Վերմիշեանի յօդուածը և Էջմիածնի մէջ համագումար մը կազմելու գաղափարը արժանի են բովանդակ հայութեան շնորհակալութեանց։ Փափագելի էր, որ այդ համագումարը անյապաղ տեղի ունենար։ Սպասելով որ ի մօտոյ տեղեկանանք այն որոշումներուն, զոր պիտի տայ այդ համագումարն, ու այն գործունէութեան ծրագրին, զոր պիտի գծէ, ես այդ մասին քանի մը խորհրդածութիւններ ներկայացնելէ առաջ՝ կուզեմ քանի մը տողով ծանօթացնել մեր ռուսահայ եղբայրներուն ինչ որ միևնոյն նպատակով, ու ճիշդ այն ոգւով ու տեսակէտով զոր կը գտնենք պ. Վերմիշեանի յօդուածին մէջ, ըրին ցարդ արտասահմանի հայ գաղութներէն ոմանք, և մանաւորապէս Պարիզի գաղութը։

Արշակ Չօպանեան

Մարսէյլ, 15 հոկտ.

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Երևկոյեան հաղորդագրութիւն)

13 նոյեմբերի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Էրզրումի ուղղութեամբ ջարդված հակառակորդին հալածելը վերջացաւ։

Վերջին օրերում տեղի ունեցան մի շարք ընդհարումներ Ալաշկերտի հովտից դէպի հարաւ, որոնց ժամանակ մենք ցիրուցան արինք քիւրդերի մեծաքանակ ոյժերին, որոնց այս անգամ օժանդակում էին թիւրքաց կանոնաւոր զօրքերը։

Մնացած պատերազմաբեմերում էական փոփոխութիւն չը կայ։

—

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—«Н. В.»-ին հաղորդում են Էրզրումի զօրաճակատից. «Յամառ կռիւները, որոնք սկսվել էին նոյեմբերի 6-ից, վերջացան թիւրքերի լիակատար պարտութեամբ. թշնամին նահանջեց լիակատար անկարգ կերպով. թիւրք զօրքերի մէջ գտնված հայ զինուորները խմբերով անցնում են ռուսների կողմը իրանց զէնքերով»։

„Б. В".-ն հաղորդում է. «Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի կառավարութիւնների միջև կայացել է համաձայնութիւն, որ ճշգօրէն որոշում է նեղուցների վիճակը։ Այդ համաձայնութիւնը ընդունում է, որ Ռուսաստանը իրաւունք ունի տիրապետել նեղուցների վրա։ Ընդունված է նոյնպէս Ռուսաստանի տիրապետութիւնը Կ. Պոլսի և Բոսֆորի եւրոպական-ասիական ափերի վրա։ Համաձայնութեան բնագրում ծանօթութիւն կայ, թէ ընդունված վճիռների էութիւնը չէ կարող փոխվել ոչ մի դէպքում, և բնաւ ենթակայ չէ եւրոպական կոնֆերէնցիայի քննութեան»։

Նոյն թերթին հաղորդում են Սալոնիկից. «Ֆրանսիական «Րեպուբլիկ» յածանաւը ռմբակոծեց նոյեմբ. 10-ին Բէյրութը»։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

12 նոյեմբերի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Լօձի մօտ ճակատամարտը դեռ շարունակվում է։ Գերմանացիների մեծաքանակ գնդերը, որոնք նոյեմբերի 7-ին ներս էին խուժել Ստրիկով-Բրեզինի-Կօլիւշկի-Ռգգով-Տուշին ռազմավայրը, ետ մղվելով մեր զօրքերից՝ այժմ ամեն ջանք գործ են դնում, որպէսզի մտնեն հիւսիսային կողմը։ Կօլիւշկի կայարանից դէպի հարաւ ընկած տարածութեամբ թափառում են թշնամու ցիրուցան արված զօրախմբերը։ Մենք վերցրինք գերիների և թեթև ու ծանր թնդանօթներ։

Լովիչի մօտ կռիւը նոյեմբերի 11-ին մեզ համար նպաստաւոր էր։

Չէնստոխով-Կրակով ռազմաճակատում գերակշռութիւնը մեր զօրքերի կողմն է։ Կարպատեան լեռնաշղթայի այն կողմը մեր զօրքերը շրջապատել են աւստրիացիների մեծ ոյժերի Մէզօ-Լաբորչ կայարանի մօտ։ Այդ ռազմավայրում մենք գերեցինք մի գեներալի, 40 օֆիցէրի և աւելի քան 3500 զինուորի, ձեռք ձգեցինք 3 գնացք ու գնդակացիրներ։ Ունգարական դաշտավայրի մուտքի մօտ մենք գրաւել ենք Գումէննօէ քաղաքը։

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—«Арм. Вѣстникъ»-ում երէկ տպված էր. «Ռուս-պրուսական զօրաճակատում նոյեմբերի 9-ին ու 10-ին առանձին փոփոխութիւններ տեղի չունեցան։ Գերմանական զօրքերի՝ Վլէրժբօլովօյի զօրամասը շարունակեց նահանջել Գումբինէն-Անգէբուրգ զօրաճակատում, թողնելով ուժեղ առաջապահ գնդերի, որոնք և կռւելով ջանում են կանգնեցնել մեր զօրքերի առաջխաղացումը։ Ճանապարհների վրա կռիւները շարունակվում են։ Գերմանական զօրքերը, ձեռք ձգելով բնական մի շարք ամրութիւններ, պաշտպանվում են մեր զօրքերի յարձակումներից դանդաղօրէն, սակայն այդ պաշտպանվելը երկար չի տևի։

«Տօրն-Բեալա զօրաճակատում մեր և գերմանացի զօրքերի միջև կռիւները շարունակվեցին, ընդունելով յամառ բնոյթ։ Այստեղ զօրքերի դիրքերում առանձին փոփոխութիւն չեղաւ։

«Տօրն-Կրակով զօրաճակատում ճակատամարտ է մեր և գերմանացի զօրքերի միջև։

«Վիսլայի և Վարտայի միջև ընկած զօրաճակատում առանձնապէս խիզախ կռիւ սկսվեց Լօձից դէպի հիւսիս, ուր գերմանական զօրքերը շեշտակի յարձակումների են դիմում մեր ոյժերի դէմ, աշխատելով ընկճել նրանց. բայց հակառակորդի բոլոր ջանքերը բախվում են մեր զօրքերի տոկունութեանը։ Նրա բոլոր յարձակումները ամենուրեք վանվել են։ Այս շրջանում աւստրո-գերմանական զօրքերը մղում են վճռական ճակատամարտ, որ տնօրինելու է պատերազմի ապագայ բաղդը։ Յամենայն դէպս այս զօրաճակատում աւստրո-գերմանացիք կենտրոնացնում են շարունակ նոր ոյժեր։ Մեր զօրքերը, վանելով հակառակորդի բոլոր հարուածները, իրանք դիմում են հակահարուածների և լուրջ ջարդ են տա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏԱՆՈՒ ԱՐԻՒՆԸ

—

— Դուք կամենում էք, որ այս անգամ իմ պատմուածքը կապ ունենայ մեր այժմեան հոգեկան տրամադրութեան հե՞տ,—ասաց Սեպուհեանը։—Համեցէք։

Որովհետև ամենքս գիտէինք, որ նրա պատմուածքները ձանձրալի չեն, ուստի ցանկացանք լսել նրան։

Երկու երեք անգամ իրարու վրա կուլ տալով ծխախոտի ծուխը, նա յենեց արմունկները սեղանին և սկսեց։

—

Այդ երեկոյ սրճարանում, բացի մեզանից ոչ ոք չը կայ։ Ալազանը յուզված էր առանձնապէս։ Նա անհամբեր սպասում էր ռուս-տաճկական պատերազմի յայտարարմանը, որպէսզի իր խմբով անցնէ սահմանը։ Այն ինչ՝ իրերի վիճակը մնում էր տակաւին անորոշ։ Նա գիտէր, որ վաղ թէ ուշ տաճիկը պէտք է ձգելու չէզոքութեան դիմակը և զէնք բարձրացնելու մեր հայրենիքի դէմ, ուստի կատաղում էր, որ վճռական քայլը յապաղեցնում է։

Վեց տարի շարունակ նա գործ էր ունեցել տաճիկ զօրքերի և քիւրդ հրոսակախմբերի հետ՝ որպէս հայ ապստամբութեան պարագլուխ։ Նա յայտնի էր իբրև վտանգաւոր թշնամի, և տաճիկ պետութիւնը նրա փոթորկալի գլուխը վաղուց էր գնահատել։

Երկար ընդհարումներից յետոյ, տեսնելով որ մի քանի հարիւր անվեհեր ընկերներով չէ կարող մայրենի ժողովրդի կեանքի և գոյքի ապահովութիւնը վաստակել, վերջապէս հրաժարվեց իր խելառ ձեռնար-

Նա սպասում էր աւելի բարեյաջող ժամանակի, որպէս զի նորից բարձրացնի ապստամբութեան դրօշը։ Երբ յայտարարվեց համաեւրոպական պատերազմը, նա բնազդաբար գուշակեց, որ վաղ թէ ուշ հերթն անցնելու է և իր հայրենի երկրին։ Եւ շտապեց գալ Կովկաս, նորից գործի կանչելով իր ընկերներին։

Այժմ նա կազմ ու պատրաստ մի նոր խմբի հետ սպասում էր ռուս յաղթական բանակի շարժմանը, որպէս զի ինքն էլ իր փոքրիկ ոյժերով արշաւէ դէպի Տաճկաստան։

Ասում են՝ քաջութիւնը շատ անգամ խելօքութեան հակառակորդն է և մեծ մասամբ այն մարդիկ են վտանգների ենթարկում իրանց կեանքը, որոնք քիչ են մտածում կամ բնաւ չեն մտածում։ Չը գիտեմ որ աստիճանի ճիշդ է այդ հայեացքը, բայց Ալազանը, քաջ լինելով հանդերձ, խելօք էր և մտածում էր գուցէ շատ աւելի, քան այն մարդիկ, որոնք յիշեալ հայեացքը հրապարակ են գցել։ Ահա ինչու նա երբեք չէր պարծենում իր քաջագործութիւններով և չէր էլ խօսում նրանց մասին, երբ չէին ստիպում խօսելու։

Ինձ հետ նա շատ էլ սակաւախօս չէր, որովհետև զգում էր, որ ես անկեղծ եմ իմ սիրոյ և յարգանքի մէջ դէպի նա և որովհետև ես քմահաճ մանկան պէս թախանձում էի նրան խօսել։

Այս անգամ ինձ հետաքրքրեց մի հարց։ Ես փափագեցի իմանալ, արդեօք, իր վեցամեայ կռիւների ընթացքում, երբ նա այնքան ընկերներ է կորցրել և այնքան թշնամիներ կոտորել, զգացե՞լ է սարսափ։ Սարսափ ոչ թշնամուց և ոչ մահից։

Ալազանը գլուխը թեքեց կրծքին և աջ

մազերը, որոնք արդէն սկսել էին ալեխառնվել։ Նրա առնական դէմքը մթագնեց։ Թւաց ինձ, որ նա ցնցվեց անգամ իմ հարցից։

— Այո,—պատասխանեց, վերջապէս, երկարատև լռութիւնից յետոյ,—մի անգամ ես զգացել եմ սարսափ։ Մի անգամ, բայց այնպէս, որ այժմ էլ զգում եմ և երբէք, երբէք չը պիտի դադարեմ զգալու։

— Պատմեցէք, խնդրեմ։

— Կը պատմեմ։

—

— Ամառային տաք երեկոյ էր.—այսպէս սկսեց Ալազանն իր խօսքը, ծանր հառաչելուց յետոյ,—ես իմ երեք հարիւր հոգուց բաղկացած խմբի հետ գտնվում էի Բայազէդի կողմերում։ Այդ այն տարին էր, երբ եւրոպական հասարակական կարծիքը չափազանցացնում էր տաճկահայ ժողովրդի յեղափոխական շարժումը և, ինչպէս յետոյ իմացայ, իմ համեստ արշաւանքների մասին մամուլը տարածում էր ուռցրած լուր ու տաճիկ պետութեանը աւելի գրգռում հայերի դէմ։ Հարկաւոր էր մի կերպ խեղդել հայկական շարժումը դեսպանների ձանձրալի երթևեկութիւնից ազատվելու համար, ուստի սուլթան Համիդը, ի միջի այլոց, հրամայել էր ոչնչացնել իմ խումբը։

Արդէն երկու ամիս էր՝ վեց հազար մարդուց բաղկացած մի զօրաբանակ փնտռում էր մեզ ամենուրեք և չէր կարողանում գտնել։ Ես չէի ուզում հանդիպել նրան, խնայելով իմ խմբի մնացորդը, թէև կարող էի մի անգամ էլ անհանգստացնել արիւնարբու խալիֆին։

Այն օրն իմ խուզարկուները տեղեկացրել էին ինձ, որ տաճիկ զօրաբանակն արդէն գտել է մեր հետքը։ Պարզվեց, որ նա գտնվում է ընդամենը մէկ ժամվայ ճանապարհ հեռու այն ձորից, ուր մենք պատսպարվել էինք։ Հարկաւոր էր զգոյշ լինել։ Խորհրդակցելով իմ օգնականների հետ, որոշեցի անշարժ մնալ մինչև մութն ընկնելը և յետոյ միայն փոխել մեր դիրքը, քանի որ ինքը թշնամին անշարժ է։ Ես պատուիրեցի իմ յիսնապետներին ամեն կերպ խոյս տալ աղմուկից, ոչ ոքի թոյլ չը տալ կենտրոնից հեռանալու և մութն ընկնելուց ոչ միայն կրակ, այլ և լուցկի չը վառել։

Տալով այս հրամանը, ես հեռացայ խմբից մօտ հարիւր քայլ և առանձնացայ։ Չը գիտեմ ինչու, այդ օրն առաւօտից սկսած ես տարօրինակ տրտում էի, ուստի չէի ուզում ընկերներիս վարակել իմ տրամադրութեամբ։ Նստած մի մամռապատ քարի վրա, դիտում էի արեգակի վերջին ճառագայթները, որ ողողել էին դիմացի լեռնաշղթայի ատամները և տարածել նրանց վրա ոսկեզօծ նուրբ փոշի։ Ձորը տակաւին լուսաւորված էր, բայց մութը լեռների անտառապատ լանջերից արդէն իջնում էր ցած։ Մի ժամ ևս, և մենք պիտի ձուլվէինք խաւարի հետ։

Հրաշալի, միևնոյն ժամանակ սոսկալի երեկոյ, որ երբէք-երբէք չը պիտի չքանայ իմ յիշողութիւնից։

Խորհելով իմ ձեռնարկութեան հետևանքների մասին, յանկարծ մտքով թռայ իմ ծննդավայրը։ Յիշեցի քիւրդերից գնդակահար եղած երկու եղբայրներիս, սրտի պայթումից մեռած մօրս, թոքախտին զոհ գնացած կնոջս և իմ միակ զաւակին, որին յանձնել էի պառաւ զոքանչիս խնամքին։ Եթէ կար մի կապ, բացի բազմաչարչար մայրենի ժողովրդի վիճակից, որ ինձ հաշտեցնում էր կեանքի հետ, դա միայն և միմիայն իմ տասնուերեք տարեկան Կարօն էր, բրոնզեայ դէմքով, կրակոտ աչքերով, նուրբ կազմուածքով մի պատանի, որ, աւաղ, այժմ հանգչում է իր մօր գրկում յաւիտենականութեան մէջ…

—

Մի քանի վայրկեան Ալազանը լռեց, որպէս զի կուլ տայ արցունքը, որ պատրաստ էր սեղմել նրա կոկորդը։ Այնուհետև ձեռի ներվային շարժումով շփեց կնճռոտ ճակատը և շարունակեց.

— Ես մտածում էի, մտածում պատանու մասին ու չէի կարողանում գուշակել նրա ապագայ վիճակը, երբ ես դադարած կը լինեմ շնչելուց։ Զոհաբերվելու մասին չէի հոգում, որովհետև վճռել էի կենդանի անձնատուր չը լինել թշնամուն։ Մի անյաղթելի ցանկութիւն, կարող եմ ասել մի խելառ փափագ կլանել էր ինձ ամբողջովին—մի անգամ ես տեսնել զաւակիս, մի անգամ ես գրկել նրան, մի անգամ ես սեղմել կրծքիս նրա գանգրահեր գլուխն և այնուհետև թող լինի՝ ինչ որ լինելու է։

Ես նախատում էի ինձ իմ բարոյական տկարութեան համար, կռւում էի սրտիս հետ յանուն գործի, յանուն ընկերներիս կեանքի փրկութեան, որ մեծ մասամբ իմ կամքի ոյժից և տոկունութիւնից էր կախված։ Բայց ի զուր։ Ես պարտաւոր էի մտածել երեք հարիւր մարդու վիճակի մասին, որոնցից շատերը նոյնպէս ունէին ընտանիք ու զաւակներ, և յանկարծ հայրական էգօիզմը տիրել էր ինձ անյաղթելի ոյժով։ Ամենուրեք, ուր ձգում էի հայեացքս, զաւակիս էի տեսնում—լեռների ատամնաւոր բարձունքների վրա թռչկոտելիս, ձորերի խորքերում աղաղակելիս, կանաչազարդ տափարակների վրա ուրախ-ուրախ վազվզելիս և մերձաւոր գետակի ափին ջրի մէջ քարեր արձակելիս։

— Խմբապետ, որտե՞ղ է ուշքդ,—լսեցի

լիս Նոյեմբ. 9-ին այդ հակահարուածների ժամանակ մեր զօրքերը ձեռք ձգեցին 2400 գերմանացու և 18 գնդակացիր։

«Չէնստոխով-Կրակով ռազմագծում յամառ կռիւը մեր զօրքերի և աւստրիացիների միջև շարունակվում է մեծ ոգևորութեամբ երկու կողմից էլ։ Գործը մի քանի անգամ հասաւ սուինային կռւի։ Աւստրիացիք ամեն ջանք գործ են դնում, որպէսզի ընկճեն ռուս զօրքերի արիութիւնը և կտրուկ յարձակումներ են դիմում, պաշտպանվելով թնդանօթային կրակից։ Սակայն մեր զօրքերը սովորել են արդէն գործ ունենալ աւստրիացիների հետ և կռւի հետևանքը ինքնին պարզ աչքի է ընկնում։

«Գալիցիայի զօրաճակատում նոյեմբերի 9-ին ու 10-ին մեր զօրքերի արշաւանքը շարունակվեց։ Մենք այդ երկու օրում ետ քշեցինք աւստրիացիներին դէպի Կրակով և Կարպատների խորքը. նոյեմբերի 9-ին մենք գերեցինք 53 օֆիցէրի, 3118 զինւորի և վերցրինք 5 գնդակացիր»։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

12 նոյեմբերի

ՊԱՐԻԶ.—Երեկոյեան պաշտօնական հաղորդագրութիւնը յայտնում է. «Երէկվայ օրը անցաւ համեմատաբար հանգիստ, միայն ժամանակ առ ժամանակ տեղի էր ունենում թնդանօթաձգութիւն։ Արգոնների բարձունքներում գերմանացիք մի քանի յարձակումներ գործեցին, որոնք վանվեցին»։

Հավասի գործակալութիւնը հաղորդում է. «Հիւսիսային զօրաճակատում՝ սկսած ծովից մինչև Իպր հետևում զօրագնդերի յարձակումներ չեղան։ Լանգէմարկէի և Զօննեբէկէի միջև մենք մի փոքր առաջ գնացինք։ Լա-Բասսէ ջրանցքում հնդիկ զօրքերը ետ խլեցին թշնամուց սկզբում նրան զիջված դիրքերը։ Լա-Բասսէից սկսած մինչև Սուասօն տիրում էր համարեա լիակատար հանգստութիւն։ Մենք մասամբ առաջացել ենք Բէրրի-օ-Բակի մօտ և Արգոններում։ Բէտանկուրում՝ Վերդէնից դէպի հիւսիս-արևմուտք՝ մենք վանեցինք գերմանացիների յարձակումը։ Գերմանացիք առաջարկեցին զինադադար կայացնել, բայց մենք մերժեցինք։ Պօնտա-Մուսօնի ռազմավայրում մենք ռմբակոծեցինք Ամանվիլլը։ Վոգէզներում ոչինչ էական բան տեղի չէ ունեցել»։

ԼՕՆԴՕՆ.—Դաշնակիցները հոկտ. 31-ին գրաւեցին Վիկտորիան և Բուէա քաղաքի նաւահանգիստը։ Բուէան գրաւվեց նոյեմբերի 2-ին։ Անգլիացիք կորցրին մի քանի մարդ։ Գերմանացիք մի քանի յարձակումներ գործեցին Նիգէրիայի սահմանների ուղղութեամբ, բայց ամեն անգամ բրիտանական զօրքերի մօտենալուց յետոյ ետ էին քաշվում։

Ծովակալութիւնը հաղորդում է, որ բրիտանական երկու զրահանաւ երէկ ռմբակոծեցին Զէեբրիւգգէն։ Գերմանացիք ցոյց տուին թոյլ դիմադրութիւն։

Մամուլի բիւրօն պաշտօնապէս յայտնում է. «Դրութիւնն ամփոփ է։ Հնդիկ զօրքերը նորից ձեռք ձգեցին մի քանի դիրքեր, որ մենք զիջել էինք սկզբում, և գերեցին 3 օֆիցէրի և աւելի քան 100 զինւորի, ձեռք ձգեցին մի մօրտիր ու երեք գնդակացիր»։

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

12 նոյեմբերի

ՆԻՇ.—Լոյս նոյեմբերի 9-ի գիշերը աւստրիացիք փորձեցին անցնել Կոլուբարի գետը՝ Դրագօվաց-Վօլէնիցա-Ստարօ-Սէլօ զօրաճակատում։ Սերբերը թողին, որ թշնամու զօրքերի մի մասը անցնէ գետի աջ ափը, յետոյ յարձակվեցին և գերեցին 178 զինւորի։ Լազարէվաց-Միոնիցա զօրաճակատում կռիւները շարունակվում են մի քանի օր։ Սերբերը մասնակի աջողութիւն ունեցան Շօպիչ գիւղից դէպի հարաւ, ուր ցրուցան արին թշնամուն և գերեցին 3 օֆիցէրի, 136 զինւորի և ձեռք ձգեցին 2 գնդակացիր։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

12 նոյեմբերի

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—«Ունիվէրսալը» յայտնում է. «Պրէդիլուլում, ռումինական սահմանի մօտ, աւստրիացիք կենտրոնացրել են մեծ թւով զօրք, մանաւանդ թնդանօթներ։ Ռազնով համայնքում, որի բնակիչները ռումիններ են, ազգաբնակութիւնը անհաբեկված է մաջարներից. գիւղերից շատ ընտանիքներ փախել են Ռումինիա։

ՎԱՇԻՆԳՏՕՆ.—«Նիւ-Եօրկ Թայմսի» տեղեկութիւնների համաձայն, Գերմանիան բողոքեց Միացեալ Պետութիւնների առաջ լօնդոնեան դեկլարացիան դաշնակիցների կողմից խախտելու առիթով։ Միացեալ Պետութիւնները պատասխանեցին, որ դեկլարացիան պարտադիր ույժ չունի։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Հաստատվում է ժուռնալիստների կոմիտէտ «Մամուլի համառուսական օր» կազմելու համար՝ պատերազմի զոհերին օգնելու նպատակով։

Մինիստրների խորհուրդը թոյլատրեց ռուսահպատակութեան ընդունել աւստրիահպատակ 54 սլաւօնի։

ՊԱՐԻԶ.—Երէկ Պարիզում տարածվեցին սուտ լուրեր, թէ ֆրանսիացի զօրքերը իբր թէ հեռացել են մի քանի քաղաքներից։ Սակայն ազգաբնակութիւնը դրան հաւատ չընծայեց։ Պարիզի զինւորական իշխանութիւնները վճռել են խիստ միջոցներ ձեռք առնել այդօրինակ սուտ լուրեր տարածողների դէմ։

ԼՕՆԴՕՆ.—Վաշինգտօնից հաղորդում են, որ պետական դեպարտամենտը հեռագիր ստացաւ այն մասին, որ գերմանական ցէպպելինից ռումբ նետվեց Վարշավայում ամերիկական հիւպատոսարանի շինութեան առաջ, որը ջարդեց պատուհանները՝ ոչ ոքի չը վնասելով։

ՊԱՐԻԶ.—Բժշկական ճեմարանը դիմեց Թագաւոր Կայսրին, արտայայտելով մեծագոյն հիացմունք Նորին Կայսերական Մեծութեան այն վճռի առիթով, որի ույժով պետութեան մէջ արգելվում է ալկոհոլի վաճառումը։

ԼԻՍԱԲՈՆ.—Կոնգրէսը միաբերան ընդունեց այն օրինագիծը, որ լիազօրում է կառավարութեանը, համաձայն Անգլիայի հետ կապված պայմանագրի, միջամտել ներկայ միջազգային միջադէպին այն ժամանակ, երբ նա կը գտնի այդ հարկաւոր։ «Կապիտալը» յայտնում է, որ մասնաւոր զօրահանութեան մասին այս օրերս հրաման է արձակվելու։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ.—Բեռլինից տեղեկացնում են, որ գերմանական րէյխստագին մի օրինագիծ է ներկայացված, որ լիազօրում է կանցլէրին բաց թողնել 5 միլիարդ մարկի նոր փոխառութիւն արտակարգ միանուագ ծախքերը ծածկելու համար։

ՎԱՐՇԱՎԱ. — Շարան-շարան անց են կացնում փողոցներով վերջին կռիւներում վերցված գերմանացի գերիներին, որոնց թւումն են Վիլհէլմի սիրած պալատական գնդի զինւորները։

ՍԱԼՕՆԻԿ.—Իտալական «Տուրինօ» շոգենաւով նոյեմբերի 10-ին Բրինդիզիից եկան 150 ռուսներ, որոնք Նիշի վրայով վերադառնում են Ռուսաստան։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ)

12 նոյեմբերի

ԼՕՆԴՕՆ.—Համայնքների պալատը որոշեց արձան կանգնեցնել Ռօբէրտսին։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ.—Դուրացցօյից հաղորդում են, որ Տիրանում ապստամբութիւն է էսադ փաշայի դէմ։ Դուրացցօյի ոստիկանապետը Տիրանում յայտարարել է պաշարողական դրութիւն և կալանաւորել է էսադ փաշայի հակառակորդներից մի քանիսին, որի պատճառով շրջակայ գիւղերի բնակիչները շարժվել են դէպի Տիրան։ էսադ փաշան 1000 համախոհներով գրաւեց քաղաքի մօտի բարձունքները և Դուրացցօ տանող գլխաւոր ճանապարհները։ Տիրանի հետ հաղորդակցութիւնը խզված է։

ԼՕՆԴՕՆ.—Վաշինգտօնից հեռագրում են. «Վիլսօնը յայտնեց, որ Ռուսաստանի և Միացեալ Պետութիւնների միջև առևտրական պայմանագրերը վերսկսելու մասին բանակցելը ներկայանում է վերին աստիճանի ցանկալի»։

ՕՆՏԱՐԻՕ.—Կալանաւորվեցին երեք թիւրք, որոնք մեղադրվում են Կանադայի արդարադատութեան մինիստրին սպանելու փորձի մէջ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ «Н. Вр.»-ն գրում է, որ արտաքին գործերի մինիստր Սազօնովը ընդունեց համառուսական ազգային միութեան Պետրօգրադի ճիւղի խորհրդի պատգամաւորութեանը և յայտնեց, որ ռուսաց կառավարութեան կողմից ձեռք են առնվում բոլոր հնարաւոր միջոցները, համապատասխան ներկայ հանգամանքներին, որպէսզի կարելի լինի վերացնել Սերբիայի և Բուլգարիայի միջև գոյութիւն ունեցող անտագոնիզմը և այդպիսով հնարաւորութիւն տալ վերջնին՝ ոտք դնել համասլաւօնական քաղաքականութեան ճանապարհի վրա։

◆ «Нов. Вр.»-ն հաղորդում է. «Գերմանական և աւստրիական դեսպանները Սօֆիայում բացառիկ եռանդով աշխատում են ամեն կերպ ազդել բուլգարների վրա, որպէսզի ստիպեն նրանց հանդէս գալ ընդդէմ Սերբիայի։ Տւեալներ կան, որ Բուլգարիան զօրքեր է կենտրոնացրել Կիւստենդիլում աւստրօ-գերմանական ծրագրի համաձայն։ Այդ զօրքերը պէտք է ուղղվեն ընդդէմ սերբերի։ Միաժամանակ աւստրիացիք պէտք է կենտրոնացնեն զօրքեր Միտրօվիցայում. հէնց որ տեղեկութիւն ստացվի սերբերի պարտութեան մասին, բուլգարները աւստրիացիների հետ միասին պէտք է սկսեն ռազմի գործողութիւններ Մակեդոնիան ձեռք ձգելու նպատակով»։

◆ Նիշ են եկել Ֆրանսիացի պատգամաւորներ, որոնք բանակցութիւն են սկսել սերբիական կառավարութեան հետ։ Պատգամաւորները պնդում են, որպէս զի Սերբիան ինքն առաջարկէ Բուլգարիային գրաւել Մակեդոնիան, որի փոխարէն իբրև վարձահատուցումն Բուլգարիան պարտաւոր է աջակցութիւն ցոյց տալ Սերբիային։

◆ Պետրօգրադում տեղեկութիւններ են ստացվել այն մասին, որ ռումինական կաբինէտի բոլոր անդամները կողմնակից են հանդէս գալուն, բացի Բրատիանոյից, որ տակաւին որոշ յայտարարութիւն չէ արել և մի փոքր տատանվում է։

◆ Բուխարէստում աւստրիական և գերմանական դեսպանատները պաշտպանվում են զօրքերի օգնութեամբ։ Դեսպանատների պաշտօնեաներին նախազգուշացված է, որ երեկոները ժամը 9-ից յետոյ նրանք չը պէտք է փողոց ելնեն, այլապէս կառավարութիւնը չէ երաշխաւորում վիրաւորանքի ու սպանութեան համար։

◆ Պարիզից հեռագրում են, որ ռուսները շրջապատել են Կրակովը։ Հիւսիսային կողմից նրանք ստանում են նորանոր օգնութիւն։ Պաշարիչ թնդանօթներից արդէն կրակ է բացվում։ Քաղաքի մի մասը հրդեհից ոչնչացվել է։

◆ «Թայմսի» թղթակիցը հեռագրում է Լիւբեկից, որ գերմանացիք պատրաստվում են երկարատև պատերազմի։ Հնարաւոր է, որ զգացվի հացահատիկի պակասութիւն, բայց դրա փոխարէն մթերքներ շատ կան։ Առանձին յոյսեր դրվում են օդային պատերազմի վրա, ուստի և Գերմանիայի համար մի լօզունգ կայ այժմ՝ կառուցանել ցէպպելիններ։

◆ Գերմանացիք ահագին թւով զօրքեր են կենտրոնացրել Չենստոխովի մօտ, ուր տեղի է ունենալու վճռական ճակատամարտ ռուսների հետ։

◆ Գերմանացիք, ըստ ֆրանսիական տեղեկութեան, ահա 20-րդ օրն է՝ ռմբակոծում են Բէտիւնը 42 սանտիմետրանոց թնդանօթներից։ Բազմաթիւ տներ կործանվել են, շատ խաղաղ բնակիչներ սպանվել են։

◆ Բուխարէստում ռումին իշխանութիւնները բռնել են չորս վագօն լի ռազմամթերք, որ Գերմանիան ուղարկում էր Բուլգարիայի համար։

◆ «Р. Сл.»-ին հեռագրում են Պետրօգրադից, որ ստոյգ աղբիւրներից բղխող տեղեկութիւնների համաձայն՝ ռուսները մեծ աջողութիւն են ունեցել Վիսլա-Վարտա ռազմագծում և վերցրել են մեծ թւով գերիներ։

◆ Գերմանացիք փորձեցին խոշոր ույժերով մօտենալ Վարշավային Լօձի շրջանում, բայց ետ են մղվել ռուս զօրքերից։

◆ «Р. У.»-ում տպված է, թէ Պետրօգրադի բարձր շրջաններում լուր է պտտվում, որ Վիլհէլմը առաջարկել է Ռուսաստանին՝ հաշտութիւն կնքել։

◆ Չենստոխով-Օլկուշ ռազմագծում մեծ ճակատամարտ է։

◆ Կիևով են փախել Լեհաստանից 90,000 լեհեր։

Ս. ԳԷՈՐԳԻ ՀԱՅ ԱՍՊԵՏՆԵՐԻՑ ՄԷԿԸ

Մոսկվա, 5 նոյեմբ.

Ակնարկածս այդ հայ ասպետը հին-Նախիջևանցի է, մի հասարակ զինւոր՝ Ենովք Պօղոսեանց անունով, որ, ինչպէս երեկ հաղորդել էի, վիրաւորվել է ձախ ձեռքից Ինստերբուրգի մօտ օգոստոսի 29-ին։ Գիշերվայ ժամը 1-ին յանկարծ յարձակվում են գերմանացիք։ Ռուսներն արթնանում են և անմիջապէս հրացան առնում։ Գումարտակի հրամանատարը կարգադրում է սպասել։ Ահա լսում են մի քանի քայլ հեռաւորութիւնից թշնամու ձայնը... «ուռա, ուռա» է գոչում նա։ Զօրքը սպասում է սրտատրոփ՝ սուինի եկողներին, սակայն գերմանացիք չը կան։ Քիչ յետոյ «ուռան» գալիս է ձախ կողմից։ Հրամայվում է գնդակացիրներից երեքին երթալ ձախ և արձակել։ Գնդակների կարկուտը տեղում է, գերմանացիք դարձեալ չը կան։

Խաւարի մէջ մի քանի րոպէ լուռ սպասում են միմեանց։ Յանկարծ ռուսական զօրքի ետևից հրդեհ է բարձրանում, այրվում է դաշտի միջի յարդը։ Գերմանացիք խաւարի միջից ամեն ինչ պարզ տեսնում են. ռուսները թշնամուն չեն նկատում ամենևին։ Սկսվում է երկու կողմից մի կատաղի հրացանաձգութիւն. ռուսները դիմում են սուինի. նրանց հուժկու «ուռան» հեռու անտառներում արձագանք է տալիս։ Գերմանացիք անյայտացել են, իսկ մնացած զինւորները վայր են ձգում հրացանները և ներումն խնդրում. այսքանը բաւ է, որ զինւորը անվնաս թողնէ սրան և անցնէ միւս կողմը՝ թշնամուն բռնելու. ահա նոյն այդ ներումն խնդրող զինւորը այժմ հանում է գրպանից ռումբը և նետում մեծահոգի հակառակորդի ետևից... Այս է քաղաքակրթված տևտօնների կռւելու ազնիւ ձևը։

Իրարանցման մէջ Ենովքը լսում է իր վաշտի հրամանատարի ձայնը.

— Պօղոսով, Պօղոսով, եկ ինձ ազատիր, ի սէր Աստուծոյ, թէ չէ՝ թշնամու ձեռքն եմ ընկնելու։

Ենովքը մօտենում է իր հրամանատարին, տեսնում է ծոծրակից ծանր վիրաւորված արիւնաքամ է լինում, շալակում է նրան և մի կերպ հասցնում վիրակապութեան վայրը։ Դառնում է կռիւը շարունակելու, այս անգամ լսում է իր վաշտի հրամանատարի օգնականի ձայնը, որը վիրաւորված ընկած է. մօտենում է սրան էլ տանելու. նկատում է, որ 5 հոգի շրջապատել են վիրաւորին և կամենում են գերել։ Ձգում է հրացանը կրակելու, ամենից առաջ ինքն է վիրաւորվում ձախ ձեռքից. այնու ամենայնիւ չէ կորցնում իրան ու շարունակում է կրակել. սպանում է որևէ մէկին, թէ վիրաւորում, չը գիտէ, բայց նրան աջողվում է աջ ձեռքով գրկել և տանել վիրաւորին կրկին վիրակապութեան վայրը։

Հիացած՝ նրա անձնուիրութեան և անօրինակ քաջութեան վրա, վիրաւորված հրամանատարը գոչում է.

— Ո՛ւր էլ լինես, Պօղոսով, վիրաւոր թէ առողջ, գնդի մէջ թէ հիւանդանոցում՝ այդ հաւատարմութեան համար կը ստանաս ս. Գէօրգի շքանշանը։

Մի քանի ժամից յետոյ Պօղոսեանը արիւնաքամ լինելուց անզգայացած ընկնում է. երկար ժամանակ անկարելի է լինում նրան ուշքի բերել, և շրջապատողները կարծում են, թէ մեռել է։ Բարեբաղդաբար հետզհետէ ուշքի է գալիս։ Այժմ գտնվում է Մոսկվայում. հէնց առաջին երեկոն ցուցամատը անդամահատում են ամբողջովին. այս հանգամանքը, պատերազմի աղմուկ-աղաղակը, ճանապարհների ժխորը և նեարդերի խիստ լարումը մէկէն զգացվում է հիւանդանոցի անդորրութեան մէջ. նա սկսում է յուսահատված լալ, խնդրում է մի հայ կանչել, որ հետը խօսի, թեթևանայ. Հեռախօսով անմիջապէս իմաց են տալիս ինձ։

Արսէն ք. Սիմէոնեան

ՆՈՐԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ— ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՐԵՒԱՆ ԵՐԿԻՐՆԵՐ»

(Քարտէզ։ Հրատարակութիւն «Մշակ» լրագրի)

Այն րոպէից, երբ ծագեց ռուս-թիւրքական պատերազմը և հրապարակի վրա դըրվեց թիւրքահայերի ազատագրութեան խնդիրը, մենք զգացինք անհրաժեշտութիւն՝ տալ մեր ընթերցողի ձեռքը մի հայերէն

մի կոշտ ձայն։

Սթափվեցի։ Իմ առջև կանգնած էին երկուսն իմ ընկերներից։ Մի ձեռքով իրանց հրացանների կոթերը գետնին տնկած, միւսով նրանք երկու կողմից բռնել էին մի ինչ-որ տղայի թևերը։

— Ի՞նչ է պատահել,—հարցրի ես։

— Շան լակոտ ենք բռնել,—պատասխանեց Խև Դիլմանը, ծիծաղելով։

Նա յիսնապետ էր և իմ զինւորների շրջանում յայտնի՝ իր անողոք դաժանութեամբ քիւրդերի վերաբերմամբ։

Նա շարունակեց.

— Մենք սրան բռնեցինք ճանապարհի վրա։ Ես ուզեցի քեզ նեղութիւն չը տալ, հէնց այնտեղ վերջացնել, բայց Զօփուռը չը թողեց։

Զօփուռը, որի մականունը իսկապէս Թիֆան էր, նոյնպէս յիսնապետ էր և ոչ այնքան դաժան, որքան Խև Դիլմանը։

— Ասացի տանենք՝ խմբապետի մօտ,—արտասանեց Թիֆանը,—կարելի է հարկաւոր համարէ հարց ու փորձ անել քիւրդի ճտին։

— Ապուշ,—մռնչաց Խև Դիլմանը, հրացանի կոթը գետնին զարկելով,—դատարկ բաների համար չի կարելի խմբապետի գլուխը ցաւեցնել։

Նայեցի ձերբակալված քիւրդիկին, ցնցվեցի։ Աստուած իմ, որպիսի՜ զուգադիպում։ Իմ առջև կանգնած էր Կարօն։ Նոյն հասակը, նոյն կազմուածքը, նոյն գոյնը դէմքին, նոյն գանգուր մազերը, որ դուրս էին թափվել քիւրդական գունաւոր թասակի տակից։ Կարող էր ասել՝ նոյն աչքերը, եթէ նրանք ունենային պակաս վայրենի արտայայտութիւն։ Կանգնած էր նա անշարժ և որսված գազանիկի սարսափով նայում էր երեսիս։ Զգում էր, որ ինձանից է կախված իր ճակատագիրը։

— Ո՞րտեղ էիր գնում,—հարցրի ես նրան քիւրդերէն։

— Մեր գիւղը։

— Ինչպէ՞ս է կոչվում ձեր գիւղը։

Նա յիշեց անունը։ Ճիշդ այդ գիւղի մօտ էր բանակ դրել տաճկական զօրքը։

— Ո՞րտեղից ես գալիս։

Նա յիշեց մի ուրիշ գիւղի անունը, որ գտնվում էր դիմացի լերան ստորոտում։

— Ո՞ւմ մօտ էիր գնացել,—շարունակեցի ես։

— Քեռուս մօտ։

— Ո՞վ էր ուղարկել քեզ նրա մօտ։

— Մայրս։

— Ե՞րբ։

— Երէկ։

— Ինչո՞ւ։

— Այ, սրա համար։

Նա բաց արաւ բռունցքը և ցոյց տուեց մի քանի տաճկական դրամներ։

— Քեռի՞դ է տուել։

— Այո։

— Ինչո՞ւ համար։

— Մայրս ալիւր պիտի առնէ,—պատասխանեց պատանին այս անգամ ոչ երկիւղով, այլ մի քիչ խրախուսված։

Պարզ էր, որ իմ հարցերի, գուցէ և ձայնի մեղմութիւնը նրան յոյս էր ներշնչում։ Ազատութեան յոյս։

— Հայր ունե՞ս։

Կատաղութեան պէս մի բան փայլեց քիւրդիկի աչքերի մէջ։

— Ոչ,—պատասխանեց դողդոջ ձայնով,—անցեալ տարի Ալազանի մարդիկ նրան սպանեցին։

— Ո՞վ է Ալազանը։

— Գեավուր,—չը վախեցաւ պատասխանել պատանին։

— Եղբայրներ ունե՞ս։

— Ոչ մէկը։

— Քանի՞ տարեկան ես։

— Տասնուերեք։

Ճիշդ իմ Կարօյի տարիքը։ Բայց ես ամաչեցի իմ հարցերից։ Ինչի՞ էին հարկաւոր նրանք։ Այն ինչ՝ քանի իմ հարցերը շարունակվում էին, այնքան պատանին սիրտ էր առնում, այնքան փրկութեան յոյսը զօրեղանում էր նրա մէջ։

Ես լռեցի։ Լուռ էին և իմ յիսնապետները։ Միայն Խև Դիլմանը զանազան շարժումներով արտայայտում էր իր անհամբերութիւնը։

Ես մտածում էի՝ ինչ անել։ Յանձնել պատանուն Խև Դիլմանին և Թիֆանին։ Բայց նրանք ուրիշ դատավճիռ չունեն, բացի մէկից, որ որքան անխուսափելի, նոյնքան և դաժան էր։

Եւ ինչո՞ւ, ո՞ր յանցանքի համար։ Միթէ բաւական չէ, որ պատանու հայրն արդէն քաւել է իր բաժին մեղքը։ Վերջապէս, այդ հասակում, երբ բարւոյ և չարի գաղափարը տակաւին չէ ձուլվել նրա մէջ։ Եւ այդքան նման իմ Կարօյին։

Մի վայրկեան իմ մէջ ցանկութիւն ծագեց գրկել սիրուն պատանուն հայրական գգուանքով, սեղմել նրա գանգրահեր գլուխը կրծքիս, համբուրել, ճիշդ այնպէս, ինչպէս մի փոքր առաջ փափագում էի Կարօյիս մասին։ Եւ, ով գիտէ, գուցէ և անէի այդ, եթէ լինէի մենակ, եթէ ինձ վրա յառած չը լինէին երկու զոյգ կատաղի աչքեր, որոնց մէջ ազգային վրիժառութեան բոցը չէր գտնվում նոյնիսկ անմեղութեան

— Ի՞նչ կասէք, եթէ ես արձակեմ այդ երեխային, որ գնայ իր մօր մօտ,—փորձեցի ես։

Խև Դիլմանը նայեց երեսիս ապշած։

— Զօփուռ, ինչ ասաց նա,—դարձաւ նա Թիֆանին։

— Խմբապետ,—դարձաւ ինձ Թիֆանը,—եթէ սրան արձակենք, կը գնայ, իսկոյն զօրքին կը յայտնի մեր տեղը։ Պատասխանատու ես մեր մասին։

— Պատասխանատու ես,—կրկնեց Խև Դիլմանը։

— Մենք ազնիւ խօսք կը վերցնենք, որ չը յայտնէ զօրքին իր տեղը,—փորձեցի ես համոզել նրանց։

— Քիւրդն ազնիւ խօսք չունի,—ասաց Թիֆանը։

Ես լռեցի։ Կար մի ուրիշ միջոց պատանուն փրկելու համար։ Փորձեցի այն։

— Եկէք դրան վերցնենք գերի,—ասացի ես։

— Դժուար է պահել նրան,—առարկեց Թիֆանը։—Այստեղ նա բոլոր ծակուծուկերը ճանաչում է, ամեն րոպէ կարող է փախչել ու թագնվել։

— Մենք կը կապոտենք նրա ձեռներն ու ոտները։

— Ձի չունենք, ինչպէս տանենք մեզ հետ, եթէ հարկաւոր լինի փախչել։ Մեր ուսերի վրա՞։ Ինչո՞ւ։ Ի՞նչ մի թանգագին աւար է։

Խև Դիլմանը թէև լուռ, բայց քանի գնում, այնքան աւելի ու աւելի կատաղում էր։ Վերջապէս նա ասաց.

— Լսիր, խմբապետ. այն ցեղը, որին պատկանում է այս շան լակոտը, մորթել է իմ այրի քրոջ երեք զաւակներին։ Ես այն տատ խօսք եմ տուել երեքի տեղ մորթել վեցը։ Մինչև օրս մորթել եմ երկուսը։ Թող գոնէ սա լինի երրորդը։ Երեքը երեխի տեղ։ Ես պահանջում եմ։ Եթէ թոյլ չը տաս, չեմ հպատակվի։ Հասկանում ես, չեմ հպատակվի։

Քիւրդ պատանին, որ մեր վիճաբանութիւնից բան չէր հասկանում, նայում էր ինձ շարունակ յուսով։

Անտարակոյս նա գուշակում էր իմ միտքը, այլապէս ինչպէ՞ս կը ժպտար երեսիս այնպիսի հաւատով ու սիրով։ Խեղճ պատանի. նա չը գիտէր, որ նոյնիսկ հրամանատարը անկախ չէ իր գործողութիւնների մէջ։

Երբ համոզվեցի, որ իմ ջանքերը բացի ապարդիւն լինելուց՝ կարող են և վտանգի ենթարկել իմ խումբը, ասացի.

— Հեռացրէք դրան աչքիցս...

Վայրագ խնդութիւնն աղաւաղեց Խև Դիլմանի առանց այն էլ այլանդակ դէմքը։

Նա բռնեց պատանու թևից և քաշեց, տարաւ նրան մերձակայ ժայռի ետևը։

Վերջին անգամ քիւրդը ետ նայեց։ Եւ մայր մտնող արեգակի մահացող շողերը փայլեցին նրա բրօնզեայ դէմքի վրա, որ դեռ ժպտում էր, ու սևորակ աչքերի մէջ, որ դեռ յոյս էին արտայայտում...

Ես ձեռներով ծածկեցի աչքերս։ Փոքր անցած՝ ժայռի ետևից լսեցի մի վայրենի ճիչ։ Մի ճիչ, որ այժմ ես հնչում է իմ ականջներում և պիտի հնչէ յաւիտեան...

Դա պատանու անմեղ արեան ձայնն էր...

Իմ կեանքի մեծագոյն սարսափը...

Այլևս Ալազանը չը խօսեց։ Նրա մռայլ աչքերի մէջ ես նկատեցի արցունքի կաթիլներ...

քարտէզ, որ ծառայէր նրան թէ պատերազմական գործողութիւնների վայրերի և թէ հայկական վեց վիլայէթների ուսումնասիրութեան համար։ Ասիական Թիւրքիայի քարտէզներ շատ կային, որոնցից մենք կարող էինք ընտրել մէկը և կամ նրանց հիման վրա վերակազմել մի նոր քարտէզ։ Սակայն ժամանակը շտապողական լինելով, մենք նպատակայարմար համարեցինք վերատպել այն քարտէզը, որ 1904 թ. հրատարակել է Եւրոպայի Հայ Ուսանողական Միութիւնը Շվէյցարիայում, կատարելով միայն մի քանի սրբագրութիւններ և փոփոխութիւններ և կցելով նրան հայկական վեց վիլայէթների ազգաբնակութեան վերջին ճշգրիտ վիճակագրութիւնը։ Այդ քարտէզը այսօր մենք ուղարկում ենք ձրիաբար մեր բոլոր բաժանորդներին։

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ

Ստացանք Բագուից, Գ. Պ.-ից 75 րուբլի։ Նախորդ ստացվածների հետ միասին (տես «Մշակ» № 256) ունենք ստացած ընդամենը 228 րուբլի։

ՅՕԳՈՒՏ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ

Ստացանք Բագուից, Գ. Պ.-ից 25 րուբ.։ Նախորդ ստացվածների հետ միասին (տես «Մշակ» № 254) ունենք ստացած ընդամենը 128 րուբլի։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Անմեղ զոհ

Քութայիս, 9 նոյեմբերի

Նորերս տեղիս պատուաւոր վաճառական Նիկիֆոր Ջանելիձէն դրամաշորթներից մի սպառնական նամակ է ստանում, որով փող են պահանջում իրանց շուայտութեան յագուրդ տալու համար։ Վաճառական Ջանելիձէն թողնում է նամակը առանց ուշադրութեան։ Ստանում է երկրորդ նամակը։ Դարձեալ ուշադրութիւն չէ դարձնում։ Եւ ահա քիչ ժամանակ անցած, երեկոյեան ժ. 6-ին, Սպիտակ կամուրջի մօտ յափշտակում են նրա անդրանիկ որդուն, գիմնազիայի 4-րդ դասատան աշակերտ երեխային։ Լուրը տարածվում է կայծակի արագութեամբ։ Ոստիկանութիւնը ոտքի է կանգնում և, երկար հետախուզումներից յետոյ, աջողվում է գտնել յափշտակված մանկան տեղը։ Ոստիկանները իսկոյն շրջապատում են չարագործների որջը և սկսւում հրացանաձգութիւն։ Աւազակները փախած են լինում իրանց թագստատեղից։ Յայտնվում է նրանց զոհ մանուկը, որի զգեստը փոխված է լինում—փաթաթված թաղիքի մէջ և գլխին ծածկած փափախ։ Նրան ընդունելով աւազակի տեղ՝ սարաժնիկներից մէկը ուղղում է հրացանը և տեղն ու տեղը սպանում թշուառ մանկան։

Այսօր թաղեցին դժբաղդին։ Ամբողջ քաղաքը ոտքի էր կանգնած և ժողովուրդը այն աստիճան էր գրգռված, որ եթէ ոճրագործները ձեռքներն ընկնէին, նրանց ծւիկ-ծւիկ կանէր։

Ասում են, որ յափշտակողներից գլխաւորը խղճահարվելով՝ ինքնակամ եկել է և խոստովանել իր յանցանքը։

Ե՞րբ պէտք է չքանան մեր այդ ներքին թշնամիները, ե՞րբ պէտք է բուժվեն մեր այդ ներքին վէրքերը։ Ս. Նազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով Մեսրոպ և Խորէն եպիսկոպոսները այսօր մեկնում են ռուս-թիւրքական սահմանը՝ հայ զինուորներին այցելելու և մխիթարելու համար։

◆ Նոյեմբ. 12-ի երեկոյեան Թիֆլիս վերադարձաւ Վրաստանի էկզարխ Պիտիրիմ արքեպիսկոպոսը, որ գնացել է՝ կովկասեան սահմանի վրա գործող զօրաբանակը։ Նա եղել է Կարսում, Սարիղամիշում, օրհնել է զօրականներին, բաժանել նրանց խաչեր և յատկապէս զօրականների համար տպագրած համառօտ քարոզներ։

◆ Այսօր երեկոյեան ժամը ուղիղ 9-ին Տ. Նազարեանի Գրական - Գեղարուեստական Սալօնում տեղի կունենայ jour fix-ի հերթական հաւաքոյթ նուիրված հայկական հարցին։ Երեկոյթը սկսվելու է Սալ-Մանի զրոյցով՝ «Հայերի դերը թիւրքերի հետ ունեցած պատերազմների ընթացքում» թեմայով։ Զրոյցի ժամանակ յատուկ ուշադրութիւն է դարձվելու 1877—78 թուականների պատերազմներին և տեղի ունեցած կռիւներին, ուր առաջնակարգ դեր են կատարել մի շարք հայ տաղանդաւոր զօրապետներ։

◆ Վաղը, շաբաթ, Հասարակական ակումբում (Գրիբօեդովսկայա փող. № 22) կը կայանայ մի երեկոյթ նուիրված Ա. Գ. Ռուբինշտէյնի յիշատակին նրա մահվան 30-ամեակի առիթով։ Ռեֆէրատներ կը կարդան Ս. Գ. Տէր-Գրիգորեան և Ս. Ն. Սօլովեվա-Սօբախովա։ Այնուհետև լինելու է երաժշտական բաժին մասնակցութեամբ ակումբի լաւագոյն սիրողների։

◆ Այսօր, ամսիս 14-ին, Ժողովրդական Տանը յունաց դրամատիկական խումբը ներկայացնելու է «Եկատերինի կէ Կամնոպուլօս» (Տրապիզոնի վերջին պրինցուհին) 4 գործ. պատմական դրաման, հեղ. Արգիրոպուլօյի, և «Կապնօգօլխօտախարիտոխ» 1 գործ. կոմեդիան, հեղ. Սալիվէրի։ Կը լինի համերգային բաժին։

◆ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն իր դիւանատանը կից բաց է արել մի արհեստանոց, ուր պատրաստվում են վիրակապի փաթեթներ վիրաւոր զօրականների համար։

◆ Պետական Դումայի անդամ Գեսլովանի անունով Պետրոգրադից փոխադրված է 30,000 րուբլի սանիտարական կառքերի և սայլերի համար ձիեր գնելու, որպէս զի վիրաւորներին առաջապահ դիրքերից փոխադրեն մինչև սանիտարական գնացքները։

◆ Համառուսական քաղաքների դաշնակցութեան գլխաւոր լիազօր, Մոսկվայի քաղաքագլուխ և Պետ. Դումայի անդամ Մ. Վ. Չելնօկովին քաղաքի անունից մատուցվել է արծաթեայ կովկասեան դաշոյն պատշաճ մակագրութեամբ։

◆ Կովկասեան գլխաւոր կոմիտէտը խնդրում է այն անձերին, որոնք գնում են գործող զօրաբանակը, բարեհաճել այդ մասին յայտնել փոխարքայի պալատում, գնդապետ Ի. Գ. Բարանովին, և թէ ե՞րբ են գնում, որպէս զի նրանց հետ իրեր և այլ առարկաներ ուղարկվեն զօրաբանակի համար։ Միւս թերթերին խնդրվում է արտատպել։

◆ Վրաց ազնուականութեան առաջին հիւանդանոցը կը բացվի նոյեմբերի 23-ին, կիրակի օրը։

◆ Վիրաւոր և հիւանդ զօրականներին կատարեալ հանգստութիւն տալու նպատակով ոստիկանապետը կարգադրել է բոլոր պրիստաւներին միջոցներ ձեռք առնել, որպէս զի լազարէթների (Կարմիր Խաչի դրօշակներով) մօտ փողոցներում բոլոր կառքերը, աւտոմօբիլները և էլեքտրաքարշի վագոնները անցնեն դանդաղ, առանց շւացի և զանգի, իսկ անցորդները աղմուկ չը բարձրացնեն և չը հաւաքվեն մայթերի վրա։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Վրաց Գիւղատնտեսական Ընկ. վարչութիւնը ազնուականութիւնից յատկացված յատուկ գումարի մի մասը խնդրում է նրանից, որպէս զի կարօտ գիւղերին անհրաժեշտ մթերքներ հայթայթելու գործը վարչութիւնը օր առաջ աջողեցնել կարողանայ։

◆ Վրաց ազնուականութեանը պատկանող Սաբուրթալօյում գտնվող 120 դեսեատ. հողաբաժինը, որի վրա պէտք է կառուցվէր պօլիտեխնիկումը, տարեկան 500 րուբլի կապալավճարով տրված է Թ. Ճիճինաձէին։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Օպէրա

Նոյեմբերի 12-ին, Արքունական թատրոնում կրկնվեց «Տաիս» գեղեցիկ օպէրան, մասնակցութեամբ տ. Ստարօստինայի, պ.պ. Զալեվսկիի և Ռօզինսկիի։

Տ. Ստարօստինան Տաիսի դերում սկզբում թոյլ էր, յետոյ մտաւ իր դերի մէջ։ Հոյակապ կերպով ամբողջացրեց քուրմի դերը Զալեվսկին, որին շատ սազում է այդ դերը։ Ռօզինսկիի վստահ խաղը մեզ շատ դուր է գալիս. ձայնական կողմից էլ նա ունի տուեալներ աչքի ընկնող դերասանների շարքը դասվելու ապագայում։

Անթերի էր բալէտը սովորականի նման, յայտնի տ. Բաուէրգակսի մասնակցութեամբ։

Այսօր նշանակված է օպէրա յաճախող հասարակութեանը քաջ ծանօթ, տաղանդաւոր բաս Շվէցի բենեֆիսը, որի առիթով կը ներկայացվի «Ռուսալկան»։ Ե.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Հայոց ներկայացումները Բագւում

Բագու, 10 նոյեմբերի

Հայոց վերջին հինգ ներկայացումների մեծամասնութիւնը կրկնողութիւն էր մի անգամ արդէն խաղացված պիէսների։ Մի երկու ներկայացման էլ մենք անկարող էինք հանդիսատես լինել, ուստի և ընդհատվեց մեր թղթակցութիւնների շարքը։

Նախավերջին ներկայացմանը, որ տեղի ունեցաւ նոյեմբերի 7-ին, բեմ հանվեց Րաֆֆիի «Խէնթը»։ Վիպասանի այդ գործը բեմի համար յարմարեցրել էր դերասան Զարիֆեանը և Րաֆֆիի վէպը դարձել էր 8 պատկերից բաղկացած մի «դրամա»։ Պէտք է ասել, որ Զարիֆեանի ձևած պիէսը շատ հեռու էր բեմական կատարեալ գործ լինելուց։ Մեր շնորհալի դերասանը աւելի շատ տուրք էր տալիս ներկայ պատմական մոմենտի ապրումներին. հին անցուդարձերի պատկերացումով շեշտել մեր օրերի արիւնոտ դրաման, որ կատարվում է Հայաստանի հողի վրա։ «Խէնթի» ներկայացումը գրաւել էր բազմաթիւ հանդիսատեսներ։

Եւ ինչ որ նշանակալից է, հէնց այս վերջին հանգամանքն է։

ՀԻՒԾՈՒԱԾՈՒԹԻՒՆՆ

ու նիհարութիւնը, եթէ առաջացած է թոքախտից, սիֆիլիսից եւ կամ այլ քրոնիկական հիւանդութիւններից, նեվրաստենիան եւ ջղային հիւանդութիւնները, սեռական թուլութիւնը, սրտի հիւանդացումները, զառամութիւնը մեծ աջողութեամբ բժշկւում է Սպերմին-Պելը, որի մասին վկայում են աշխարհիս ամենայայտնի բժիշկների բազմաթիւ դիտողութիւնները գրականութեան մէջ։

Սպերմին-Պելը միակ իսկական, բազմակողմանի փորձված Սպերմինն է. այդ պատճառով էլ պէտք է ուշադրութիւն դարձնել „ՍՊԵՐՄԻՆ-ՊԵԼԻ“ անուան վրա և չը գնել կեղծվածները, հեղուկներ և սերմային գեղձերից պատրաստված մահլամներ, որպէս անպէտք նմանողութիւններ, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպերմին-Պելի հետ ոչ մի առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր։

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար «Цѣлебное дѣйствіе Спермина» գիրքը. ամբողջ օրգանօթէրապիայով հետաքրքրվողներին ուղարկվում է՝ 4 հատ 7-կոպէկանոց նամականիշ ստանալուց յետոյ՝ նոր լոյս տեսած «Цѣлительныя силы организма» գիրքը։

Սպերմին-Պելին կայ ամենուրեք։

Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-вья С.П.Б.
Մատակարար Նորին Կայսերական Մեծ. Դրան

№ 4 (М. 8663) 0—8

Հայոց բեմի վրա յաճախ բովանդակալից պիէսներ են տրվում և գեղեցիկ էլ խաղացվում, սակայն նման պիէսները մարդ չեն գրաւում թատրոն։ Իսկ այսօր Րաֆֆիի վէպի թոյլ ու անկատար պատկերացումը հաւաքում է մեծ հասարակութիւն, ոգևորում է նրան, անգամ էքստազի մէջ գցում։ Այդ մեծ հասարակութիւնը չը կարծէք թէ ինտելիգենտ և ունևոր խաւերից է։ Ո՛չ։ Րաֆֆին գալիս է տեսնելու հայ հասարակ ժողովուրդը, վիպասանը դեռ ևս շարունակում է խօսել այդ ժողովրդի հոգուց։ Այս հանգամանքը չը պէտք է աչքաթող անեն մեր այն բոլոր հասարակական գործիչները, որոնք կամենում են ճանաչել հայ ժողովրդին և լինել նրա բարեկամն ու սպասաւորը։

Զարիֆեանի ձևած պիէսը աւելի շատ շունչ ու շառաչ էր պարունակում, որը և բնական է, քան թէ նուրբ դրամատիկ տեսարաններ։ Երկու շատ ու քիչ կենդանի անձեր կային բեմի վրա. սանուտէր Խաչօն (պ. Սեւսիմեան) և Թոմաս էֆէնդին (պ. Մ. Թաշճեան)։ Թատրոնի վարիչները ստատիստների դեր կատարելու համար հրաւիրել էին մի քանի տասնեակ կօզակ իրանց դրօշակով, փողով և զէնքերով։ Դա աւելի էր շուք տալիս ներկայացմանը և հրճւանք պատճառում ժողովրդին։ Ի հարկէ, ծափերն ու կեցցէները անպակաս էին։ Դ. Ա.

ՄԱՄՈՒԼ

«Кав. Сл.»-ն իր երէկվայ համարում տպել է հետևեալ գեղեցիկ յօդուածը.

Զրպարտութիւնը միշտ զզուելի է, բայց զրպարտութիւն կայ, որ վատթար է ամեն տեսակից. դա զրպարտութիւնն է ոչ թէ մի անձի վերաբերմամբ, այլ մի ամբողջ ժողովրդի։ Նման զրպարտութեան հետ, որքան էլ նա անտանելի լինի, մամուլը պարտաւոր է հաշիւ տեսնել։

Զրպարտիչը—լինի նա հեռաւոր անձն, որ լուրեր է տարածում իրան անհաճոյ հարևանի մասին. լինի նա յանցաւոր կանչ, որ ցեխ է շպրտում մի ամբողջ ազգի վրա—լաւ գիտէ, թէ որքան էլ անհեթեթ, որքան է անճշմարտանման լինի այդ զրպարտութիւնը, միևնոյն է՝ կը գտնվեն թեթեւամիտ մարդիկ, որոնք կը հաւատան դրան։ Ի զուր չէ, որ ժողովրդական իմաստութիւնը ասում է. «Զրպարտիր, զրպարտիր, ինչ-որ բան էլի կը մնայ»։

Միթէ պատմութիւնը իր գիրկը չէ առել զրպարտութիւնը առաջին քրիստոնեաների դէմ, որոնք իբր թէ երկրպագում էին իշի գլխին և ծիսական նպատակով իբր գործ էին ածում մանուկների արիւն։ Չէ՞ անցել արդեօք կարմիր, խօսքի բառացի մտքով, արիւնալի թելով ամբողջ պատմութեան միջով հրէայ ազգի վերաբերմամբ եղած զրպարտութիւնների շղթան։ Զրպարտական մտածումները բացարձակապէս անհեթեթ էին և, չը նայած դրան, նրանք գտնում էին իրանց տարածողներին և, որ գլխաւորն է, սառնասիրտ ունկնդիրների, որոնք հաւատում էին նրան, ինչ «ասում» են։

Դրա համար էլ մամուլի նպատակն է եռանդուն կերպով ետ տալ նման զրպարտութիւնները մի ազգի վերաբերմամբ, զրպարտիչների հէնց առաջին փորձի դէպքում։ Ետ պիտի տալ անգամ այն ժամանակ, երբ զրպարտութիւնը պարզօրէն անհեթեթ է, որովհետև անգամ ամենաանհեթեթ բամբասանքը միշտ բաւականաչափ լսողներ է գտնում։

Կովկասեան մամուլին բաժին է ընկել ծանր պարտականութիւն՝ հանդէպ գալու նման բացարձակ անհեթեթ զրպարտութեան դէմ։ Մենք ապրում ենք պատմական օրերում, երբ լուծվում է ազգային թշնամանքը, որը երկար տարիներ վատագոյն խոտի պէս կերել է Կովկասի հասարակական կեանքը, երբ վրացու, հայի, լեզգիի, թուրքի և ռուսների փոխարէն կանգնել է կովկասցին։ Ահա պատրաստվում է հզօր առաջադիմութեան արշալոյսը այն երկրի, որի որդիքը մոռացել են փոխադարձ հաշիւները և կամենում են հաշտ, ձեռք ձեռքի տուած դիմել մի նպատակի։ Եւ այս հանդիսաւոր օրերին ինչ-որ զրպարտիչների կանչվածոցը փորձում է կուեցնել իրար հետ Կովկասի ժողովուրդներին։ Անհեթեթ, պարզ զրպարտութիւն և մեղադրանք է բարդվում այն ժողովրդի վրա, որը ամբողջ հոգով սպասում է ռուսաց զէնքի յաղթութեան, որը պատերազմի սեղանին զոհ է բերում այն ամենը, ինչ որ ունի և որը առաջինն է, որ ծանր գնով զոհ է բերում իր տասնեակ գիւղերը, հազարաւոր տները՝ դէպի Ռուսաստանը ցոյց տուած համակրութեան համար։ Այդ՝ նրանց մասին են տարածում զրպարտութիւն, թէ իբր հայ ժողովրդի որդիները չեն կամենում կռւել, թէ իբր նրանք վախկոտներ են, որ փախչում են առաջին հրացանաձգութեան դէպքում. աւելին. իբր թէ նրանք կամաւորների խմբի մէջ են մտնում նրա համար, որպէս զի յետոյ անցնեն թիւրքերի կողմը և դաւաճանեն Ռուսաստանին։

Զրպարտութիւնը բացորոշ կերպով անհեթեթ է։ Ամենքը, ովքեր եղել են հայի հետ մի շարքում կանգնած, ասում են, որ նա քաջարար է կռւում թշնամու հետ, որ հայերը ձեռք են առնում ամենավտանգաւոր գործեր, որ նրանք իրանց կեանքը չեն ափսոսում։ Բացի այդ՝ առաջանում է զրպարտութեան միւս մասը, աւելի անհեթեթ, աւելի զազիր—Հայերը իբր դաւաճաններ են. նրանք առ այժմ մեզ հետ են, որպէս զի յարմար մոմենտին մատնեն մեզ թշնամուն՝ թիւրքերի կողմը անցնելով։

Այստեղ՝ թւում է՝ անհեթեթութիւնը անցել է իր սահմանից։ Հայերը երկար դարեր հեծում են թիւրքաց լծի տակ. երկար դարեր ապրում են ջարդերի սպառնալիքի տակ, որոնք կրկնվում են պարբերաբար. հայերի ոչ կեանքը, ոչ պատիւը, ոչ գոյքը ապահովված չեն առաջին պատահած քիւրդի կամ թիւրք կայմակամի բռնութիւնից։ Թիւրքիայի հայերը դարերով իրանց հայեացքը ուղղել են դէպի հիւսիս և սպասում են ազատվել անտանելի լծից։ Եւ ազատվելու օրը ահա հասել է։ Ռուս զօրքի սուինների ծայրին, որ այնքան յաճախ ազատութիւն են բերել թիւրքաց «րայաներին», վառվեցին հայկական վիլայէթների ազատագրութեան առաջին ճառագայթները։

Հայերը պատերազմի լուրը ընդունեցին՝ ինչպէս մի պայծառ տօն։ Ամեն ծայրից—Ռուսաստանի չէ, ոչ, ամբողջ աշխարհի—զոհաբերութիւններ թափվեցին պատերազմի սեղանի վրա ոչ միայն դրամով, այլ արիւնով, և կարծես հողից դուրս եկան կամաւորների լէգիօններ։ Հայերը գիտէին, որ պատերազմում ամենից առաջ իրանք պէտք է վարձահատոյց լինեն, որ թշնամին թիւրքական սովորութեամբ ամենից առաջ յարձակվելու է Հայաստանի խաղաղ գիւղերի վրա, որ պէտք է մորթեն առանց տարբերութեան կանանց, երեխաների, ծերերի։ Չը նայած դրան՝ հայերը բացարձակապէս ուրախացան պատերազմի տեղեկութեամբ։ Ռուսաց զօրքերը—այդ ասում են ամենքը, պատերազմից վերադարձողները—հայոց գիւղերում դիմաւորվել են ազգաբնակութեան կողմից եկեղեցական սրբապատկերներով. նրանց ընդունել են որպէս թանկագին հիւրերի. ազգաբնակութիւնը նրանց հետ բաժանում է՝ ինչ որ ունի, և յանձին նրանց՝ նրանք տեսնում են ամենից առաջ իրանց ազատարարներին։

Ալաշկերտի Կարաքիլիսէում շրջակայ գիւղերի ազգաբնակութեան ներկայութեամբ կատարվել է գոհաբանական մաղթանք Ռուսաստանի յաղթութեան համար, իսկ հէնց այդտեղ՝ հովտի միջով անցնում էին հայ փախստականների խմբերը, որոնք փախչում էին Ջիվինի և Հասանկալէի միջև եղած և հողին հաւասարեցված հայ գիւղերից։

Եւ սրանից յետոյ հայերին մեղադրել դաւաճանելու ցանկութեան և Ռուսաստանի դէմ դաւադրութիւն պատրաստելու մէջ։ Ախր չէ որ Թիւրքիայի յաղթութիւնը մահ է թիւրքաց Հայաստանի համար, չէ որ այդ յաղթութիւնը գլխովին ջարդի կենթարկի հայ գիւղերը։

Աւելի անհեթեթ զրպարտութիւն անկարելի էր հնարել։ Աւելին. անկարելի էր հնարել աւելի վիրաւորական զրպարտութիւն։ Այժմ բաց թողնել նման լուրեր՝ նշանակում է վշտացնել բազմաչարչար ժողովրդի հոգին այն ժամանակ, երբ իրականանում են դարաւոր երազները, այդ նշանակում է վիրաւորել հայ ժողովրդի սրբութիւն-սրբոցը։

Բայց գուցէ զրպարտութիւնը այնքան անհեթեթ է, որ ի զուր կը լինէր առարկել նրա դէմ։ Այո, զրպարտութիւնը անհեթեթ է, բայց առարկելը անհրաժեշտ։ Պէտք է յիշել, որ այդ բանը տարածվում է ոչ թէ այն մարդկանց մէջ, որոնք ծանօթ են հայ ժողովրդի պատմութեան հետ, այլ Ռուսաստանից եկած Տամբովի և Պենզայի նահանգների գիւղացիների շրջանում։ Պէտք է յիշել, որ նման խօսակցութիւնները միայն թուլացնում են ոչ միայն հայերի տրամադրութիւնը։ Այժմ հարց. ով է արդեօք զրպարտիչը, ով է բաց թողնում չարաթոյն բամբասանքը։

Աստուած գիտէ թէ ով. գուցէ այստեղ խառնված է գերմանական ոսկին, բայց ով էլ զրպարտէր, Թիֆլիսի բոլոր լրագիրների նպատակն է, ինչ լեզւով էլ հրատարակվելիս լինեն դրանք, ինչ ուղղութիւն էլ ունենան, անմիջապէս դուրս գալ զրպարտիչների առաջ։

Նա, ով այժմ զրպարտում է, Ռուսաստանի դաւաճանն է և դաշնակիցը արիւնոտ Թիւրքիայի, առաւել ևս արիւնռուշտ կայզերի։ Ահա թէ ինչ պէտք է ասի Կովկասի մամուլը։ Լռելը յանցանք է։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, 13 նոյեմբերի

Հայկական հիւանդանոցին օգնութիւն ստացված են դարձեալ հետևեալ նուիրատուութիւնները. Ա. Ֆ. Միրիմանեանից 500 պապիրոս, Թիֆլիսի առևտրական բանկի ծառայողներից դոմինօ և Լ. Վ. Նալբանդեանից սեղանի 36 գդալ. Մ. Դ. Եղիազարեանից 15 ր., Երամեան և Տէր-Գրիգորեան առևտրական տնից 50 ր., Է. և Վ.-ից 5 ր., Ն. Մ. Վարդանեանից 10 ր.։

Խորհուրդ

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկին., Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—$9^{1}/_{2}$—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեխ. հիւանդ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-Բ. ԺԻԶԵԼ ՏԷՐ-ԴԱՒԻԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—110

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„Մշակի“ խմբագրատանը վաճառվում են
հետևեալ վիպական երկերը.
1) ՋՀՈՒԴ ՔՈՒՇԱՆ՝ վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի . 1 ր. —
2) ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգօյի, թարգմ. Ա. Սաֆարեանի . . . . 1 ր. 50 կ.
3) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտ. վէպ. Կ. Ֆլամմարիօնի, թարգմ. Հ. Առաքելեանի . . . . 1 ր. 50 կ.
4) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բորդօյի, թարգ. Հ. Առաքելեանի — 60 կ.
5) ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի . . . . — 50 կ.
6) ՀԱՅՐԵՆԱԶՈՒՐԿ, Է. Սպիրի, թարգ. Իս. Յարութիւնեանի . — 50 կ.
7) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մօպասանի, թարգ. Հ. Առաքելեանի 1 ր. —
8) ՍԱՌԱՐՆՈՂ ՈԳԻՆ վէպ. Ց. Սօլովեանի . . . . — 40 կ.
Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25°/o զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով, պահանջողներին կը լինի միմիայն 15°/o։
Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.
(5) 0—6

ԻՆԺԵՆԵՐ
Ի. Ս. ՊՕՆԴՕՅԵՎ
Ջրմուղու շուգունէ և ցինկի խողովակներ իր ֆասօնային մասերով։
ԳՆԵՐԸ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ
ԵՐԿԱԹԷ ԳԵՐԱՆՆԵՐ
ԿԱԹՍԱՅԻ ԵՐԿԱԹ
ԱՆԿԻՒՆԱՅԻՆ ԵՐԿԱԹ
ՏԱՆԻՔԻ ԵՐԿԱԹ
(սեւ եւ ցինկով պատած)
(14, 28)

ՑԵՄԵՆՏ,
ասֆալտ, գուդրօն,
կրակի դիմացող աղիւս եւ կաւ, մեխեր,
ամեն չափսի եւ այլ
Ցիւբեղէն օժնուր. համար։

— ԹԻՖԼԻՍ —
Նիկօլաեվսկայա, 164, անկիւն Բակինսկայա փ.
— Տելեֆօն գրասենեակի № 123. —
Կան մեծ քանակութեամբ պատրաստի ապրանքներ։
34. 32—29

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный